

## ՀԱՐՑԱՇԱՐ

**Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական  
(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության  
ղեկավարման իրավունք (Հավաստագիր) ստանալու համար  
վերապատրաստման և հավաստագրման քննությունների**

### ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

#### Ֆարց 1

**Ինչպե՞ս է սահմանվում «սոցիալական գործընկեր» հասկացությունը  
«Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, մասնավորապես գործատուների, արհեստակցական և հասարակական այլ միավորումներ, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող ցանկացած կազմակերպություն, պետական և համայնքային մարմիններ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 1.8 կետ)

#### Ֆարց 2

**Ինչպե՞ս է սահմանվում «ուսումնական հաստատություն» հասկացությունը  
«Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 4-րդ կետ)

### Չարդ 3

**Ինչպե՛ս է սահմանվում «արհեստագործական ուսումնարան» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 8.1 կետ)

### Չարդ 4

**Ինչպե՛ս է սահմանվում «քոլեջ» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 9-րդ կետ)

### Չարդ 5

**Ինչպե՛ս է սահմանվում «մասնաճյուղ» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 14-րդ կետ)

### Չարդ 6

**Ինչպե՛ս է սահմանվում «ուսումնական կենտրոն» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Կազմակերպություն (այդ թվում՝ ուսումնական հաստատություն), որն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագիր (ծրագրեր):

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 15-րդ կետ)

### Չարդ 7

**Ինչպե՛ս է սահմանվում «լիցենզավորում» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 16-րդ կետ)

#### Չարդ 8

**Ինչպե՛ս է սահմանվում «որակավորում» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 17.1-րդ կետ)

#### Չարդ 9

**Ինչպե՛ս է սահմանվում «որակավորումների ազգային շրջանակ» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Մասնագիտական կրթության որակավորման աստիճանների բնութագրերի ամբողջությունը, որը ներառում է ուսումնառության յուրաքանչյուր աստիճանում ուսուցման արդյունքների և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ընդհանրական նկարագրերը:

( «Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 17.2-րդ կետ)

#### Չարդ 10

**Ինչպե՛ս է սահմանվում «պետական հավատարմագրում» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 18-րդ կետ)

#### Չարդ 11

**Ինչպե՛ս է սահմանվում «արհեստավոր» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:

(«Կրթության մասին» օրենք, 3-րդ հոդված, 18՝ կետ)

## Չարդ 12

### **Ինչպե՛ս է սահմանվում «մասնագետ» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 19-րդ կետ)

## Չարդ 13

### **Ինչպե՛ս է սահմանվում «բակալավր» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կրթություն ունեցող և առնվազն քառամյա (ոստիկանական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ միջին մասնագիտական ոստիկանական կամ զինվորական կրթության հիմքով, առնվազն եռամյա) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 20-րդ կետ)

## Չարդ 14

### **Ինչպե՛ս է սահմանվում «մագիստրոս» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ առնվազն մեկ տարի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 22-րդ կետ)

## Չարդ 15

### **Ինչպե՛ս է սահմանվում «էքստեն (դրսեկություն)» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող կրթության ձև:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 26-րդ կետ)

#### Չարդ 16

**Ինչպե՛ս է սահմանվում «ուսուցում» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 1.1-րդ կետ)

#### Չարդ 17

**Ի՞նչ միջոցով է պետությունն ապահովում կրթության բնագավառի պահպանումն ու զարգացումը.**

Բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Չարդ 18

**Ինչպե՛ս են որոշվում պետության կողմից կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը ապահովող բյուջետային նպատակային ֆինանսավորման ծավալները.**

Կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Չարդ 19

**Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները՝**

Նախատեսվում են օրենքով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 20

**Ի՞նչ հիմքով կարող է սահմանափակվել մասնագիտական կրթության իրավունքը՝**

Օրենքով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 21

#### **Պետությունը, համագործակցելով սոցիալական գործընկերների հետ՝**

Ապահովում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, ինչպես նաև երաշխավորում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգի համաչափ գործարկումն ու արդյունքների ճանաչումը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 2.1-ին մաս)

### Ֆարց 22

**Ինչպե՛ս է պետությունը ապահովում աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը.**

Համագործակցելով սոցիալական գործընկերների հետ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 2.1-ին մաս)

### Ֆարց 23

**Ի՞նչ կարգով է պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն.**

Մրցութային կարգով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին պարբ.)

### Ֆարց 24

**Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝**

Անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

### Ֆարց 25

**Ինչպե՞ս են Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները ընդունվում նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ.**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին պարբ.)

### Ֆարց 26

**Ովքե՞ր կարող են իրենց ընտրությամբ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.**

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 27

**Արգելվում է ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ կիրառել՝**

Ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ պարբ.)

### Ֆարց 28

**Ո՞ւմ նկատմամբ է արգելվում կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ.**

Ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 29

**Նպատակային ուսուցմամբ ուսանող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է՝**

Պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն.

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Ֆարց 30

**Ի՞նչ պարտադիր պայման է ամրագրվում նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում.**

Ուսանողն ավարտելուց հետո առնվազն 3 փարի ժամկետով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում.

(«Կրթության մասին» օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Ֆարց 31

**Ի՞նչ կարգով է իրականացվում նպատակային ուսուցմամբ ուսանող ՀՀ քաղաքացիների ընդունելությունը.**

Ընդհանուր մրցույթից առանձնացված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Ֆարց 32

Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների՝



Չարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 6-րդ մաս)

### **Ֆարց 33**

#### **Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը՝**

Պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոփոխապակցված ամբողջություն է:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված)

### **Ֆարց 34**

#### **Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք՝**

Շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված)

### **Ֆարց 35**

#### **Ինչի՞ համար են հիմք հանդիսանում պետական կրթական չափորոշիչները.**

Շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված)

### **Ֆարց 36**

#### **Պետական կրթության չափորոշիչները ենթակա են արդյո՞ք հրապարակման.**

Այո:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված)

### Ֆարց 37

#### **Նշվածներից ո՞րը չի համարվում ուսումնական հաստատության տիպ.**

Ուսումնարան:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 38

#### **Ո՞ր նորմատիվ փաստաթուղթն է սահմանում կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը.**

Կրթական ծրագիրը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, կետ 3-րդ)

### Ֆարց 39

#### **Կրթական ծրագիրը սահմանում է՝**

Որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 40

#### **Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են.**

Կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 41

#### **Նշվածներից ո՞րը մասնագիտական հիմնական կրթական ծրագիր չէ.**

Հիմնական մասնագիտացված:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 42

**Ի՞նչ հիմքով են որոշվում ուսումնական հաստատություններում հանրակրթական և մասնագիտական հիմնական ծրագրերի յուրացման ժամկետները.**

Օրենքով և համապատասխան պետական կրթական չափորոշիչով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 4-րդ մաս)

#### Ֆարց 43

**Ինչի՞ն են նպատակաուղղված լրացուցիչ կրթական ծրագրերը.**

Նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և (կամ) հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Ֆարց 44

**Կրթական ո՞ր ծրագրերն են նպատակաուղղված նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և (կամ) հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն.**

Լրացուցիչ կրթական ծրագրերը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Ֆարց 45

**Լրացուցիչ կրթական ծրագրերը նպատակաուղղված են նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված՝**

Գիտելիքները, կարողությունները և (կամ) հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Ֆարց 46

**Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են.**

Առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 47

**Նշվածներից ո՞րը չի համարվում կրթական ծրագրերի իրականացման ձև.**

Ներառական:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 48

**Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է՝**

Միասնական պետական կրթական չափորոշիչը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Չարդ 49

**Նույն կրթական ծրագրերի շրջանակներում, կապված կրթության ձևից, կարո՞ղ է արդյոք գործել տարբերակված պետական կրթական չափորոշիչ.**

Ոչ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Չարդ 50

**Ի՞նչ հիմքով կարող են ոչ ուսումնական հաստատությունները իրականացնել կրթական ծրագրեր.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Չարդ 51

**Կրթության գործընթացը կարգավորվում է՝**

Ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 1-ին մաս)

## Ֆարց 52

**Ո՛ւմ կողմից են հաստատվում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը.**

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 3-րդ մաս)

## Ֆարց 53

**Կարո՞ղ են արդյոք նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները հաստատել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը.**

Այո, եթե դրանք համապատասխանեցված են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած չափորոշիչներին:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 3-րդ մաս)

## Ֆարց 54

**Ո՞ր մարմինն է վերահսկում ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 4.<sup>1</sup> մաս)

## Ֆարց 55

**Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է՝**

Պետական կրթական չափորոշիչով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Ֆարց 56

**Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում՝**

Համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 4-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 57

**Ովքե՛ր կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ.**

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 4-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 58

**Ո՞ր մարմինն է սահմանում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը.**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 4-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 59

**Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են՝**

Անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 1-ին մաս)

#### Ֆարց 60

**Ո՞րն է լրացուցիչ կրթական ծրագրերի խնդիրը.**

Կատարելագործել, արդիականացնել և լրացնել մինչ այդ ձեռք բերված (նախընթաց) գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքները:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 2-րդ մաս)

#### **Չարդ 61**

**Ո՞ր մարմինն է սահմանում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը.**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 3-րդ մաս)

#### **Չարդ 62**

**Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում են՝**

Վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 3-րդ մաս)

#### **Չարդ 63**

**Ինչպե՞ս են կազմակերպվում լրացուցիչ կրթական ծրագրերը.**

Վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 3-րդ մաս)

#### **Չարդ 64**

**Ի՞նչ հիմքով կարող են լրացուցիչ կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքները գնահատվել և ճանաչվել.**

Օրենսդրությամբ սահմանված կարգով:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 26-րդ հոդված, 3-րդ մաս)

#### **Չարդ 65**

**Ո՞ր մարմինն է համարվում պետական ուսումնական հաստատության հիմնադիրը.**

Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 29-րդ հոդված, 1-ին մաս)

**Հարց 66**

**Ո՞վ (ովքեր) կարող է (են) լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր.**

Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 29-րդ հոդված, 3-րդ մաս)

**Հարց 67**

**Ո՞ր փաստաթղթում է նշվում ուսումնական հաստատության և դրա մասնաճյուղերի անվանումներն ու գտնվելու վայրերը.**

Հաստատության կանոնադրությունում:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 31-րդ հոդված, 3-րդ մաս)

**Հարց 68**

**Ո՞րն է հանդիսանում ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը.**

Դրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունը:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 32-րդ հոդված, 1-ին մաս)

**Հարց 69**

**Ո՞ր պահից է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված.**

Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդված, 4-րդ մաս)

**Հարց 70**

**Ինչպե՞ս է սահմանվում «մասնագիտական ուսուցում» հասկացությունը.**

Մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթաց:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

**Հարց 71**

**Ինչպե՞ս է սահմանվում «ուսանող» հասկացությունը.**



Համապատասխան ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Չարդ 72**

##### **Ինչպե՛ս է սահմանվում «ունկնդիր» հասկացությունը.**

Սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող և (կամ) որակավորման բարձրացման (վերապատրաստման, վերաորակավորման) դասընթացին մասնակցող անձ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Չարդ 73**

##### **Ինչպե՛ս է սահմանվում «դասախոս» հասկացությունը.**

Ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Չարդ 74**

##### **Ինչպե՛ս է սահմանվում «արտադրական ուսուցման վարպետ» հասկացությունը.**

Անձի արհեստագործական հմտությունները ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Չարդ 75**

##### **Ինչպե՛ս է սահմանվում «կրեդիտային (չափանիշային) համակարգ» հասկացությունը.**

Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ստուգումների նախապատրաստումը, գնահատումը և այլն:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին Մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Հարց 76**

#### **Ինչպե՞ս է սահմանվում «ուսանողական նպաստ» հասկացությունը.**

Ուսանողի ուսման վարձի փոխհատուցում պետական բյուջեի ֆինանսավորման, մասնագիտական ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Հարց 77**

#### **Ինչպե՞ս է սահմանվում «որակի գնահատում (ատեստավորում)» հասկացությունը.**

Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Հարց 78**

#### **Ինչպե՞ս է սահմանվում «հեռավար (դիստանցիոն) ուսուցում» հասկացությունը.**

Համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Հարց 79**

#### **Ինչպե՞ս է սահմանվում «դրսեկություն (էքստենսատ)» հասկացությունը.**

Ինքնակրթությամբ և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

#### **Չարդ 80**

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից չէ.**

Առաջնային և կարևոր բնագավառների, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի համար մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանն աջակցելը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 1-ին մաս)

#### **Չարդ 81**

**Ի՞նչ է հաշվի առնում պետությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում երաշխիքներ սահմանելու համար.**

Հայաստանի Հանրապետության աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 2-րդ մաս)

#### **Չարդ 82**

**Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձեռով տրվում է մրցույթի արդյունքներով արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված՝**

Ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաեւ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին եւ կարգին համապատասխան:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 83

**Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ո՞ր ուսանողին է տրվում ուսման վարձի փոխհատուցում նպաստի ձևով.**

Մրցույթի արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 84

**Նշվածներից ո՞րը Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիր չէ.**

Մրցութային կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթության կազմակերպում՝ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 85

**Նշվածներից ո՞ր ձևով է պետությունն ապահովում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացումը.**

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 2-րդ մաս, 3-րդ կետ)

### Հարց 86

**Նշվածներից ո՞ր ձևով է պետությունն ապահովում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացումը.**

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ֆինանսավորում՝ պետության պահանջներից ելնելով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 2-րդ մաս, 4-րդ կետ)

#### **Հարց 87**

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներում չի ներառվում.**

Ընդհանուր պահանջներ՝ ոլորտի սոցիալական գործընկերների առաջադրած մասնագիտական կարողությունների և դրանք ապահովող ուսումնառության արդյունքների վերաբերյալ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 2-րդ մաս)

#### **Հարց 88**

**Նշվածներից ո՞ր կրթական ծրագրով չի իրականացվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն.**

Միջնակարգ կրթության երրորդ մակարդակի (ավագ դպրոցի) կրթական ծրագրով՝ ըստ հոսքային ուսուցման:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 4-րդ մաս)

#### **Հարց 89**

**Կարող է արդյո՞ք արհեստագործական և միջին մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրով որակավորումը բարձրացրած մասնագետը համարվել վարպետ.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 4-րդ մաս, 3-րդ կետ)

#### **Հարց 90**

**Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ապահովվում է՝**

Ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում, միջին մասնագիտական համակարգից՝ բարձրագույն մասնագիտական

կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 91

**Ինչի՞ միջոցով է ապահովվում ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում.**

Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 92

**Ինչի՞ միջոցով է ապահովվում ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական համակարգից բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ.**

Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 93

**Ինչի՞ միջոցով է ապահովվում ուսանողների շարժունությունը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ.**

Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 94

**Նշվածներից ո՞րը չի կարող իրականացնել միջին մասնագիտական կրթական ծրագիր.**

Ուսումնարանը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

**Հարց 95**

**Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են արհեստագործական կրթության «արհեստավոր» և միջին մասնագիտական կրթության «մասնագետ»՝**

Որակավորման աստիճանները:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 1-ին մաս)

**Հարց 96**

**Ի՞նչ հիմքով են սահմանվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնառության ժամկետները.**

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով՝ կախված մասնագիտության ուսուցման առանձնահատկությունից և ուսանողի մինչ այդ ստացած կրթությունից կամ կրեդիտների քանակից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 2-րդ մաս)

**Հարց 97**

**Ինչի՞ց կախված են սահմանվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներում համապատասխան կրթության ուսումնառության ժամկետները.**

Մասնագիտության ուսուցման առանձնահատկությունից և ուսանողի մինչ այդ ստացած կրթությունից կամ կրեդիտների քանակից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 2-րդ մաս)

**Հարց 98**

**Որքա՞ն է արհեստագործական կրթության արհեստավորի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը.**

6 ամսից մինչև 3 տարի է:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին պարբ.)

**Չարդ 99**

**Կարո՞ղ է արդյոք սահմանվել արհեստագործական կրթական ծրագրով իրականացվող կրթության այլ հիմք և ուսուցման տևողություն.**

Այո, կառավարության որոշմամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 3-րդ մաս 2-րդ պարբ.)

**Չարդ 100**

**Որքա՞ն է միջին մասնագիտական կրթության մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը՝**

2 տարուց մինչև 5 տարի է:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

**Չարդ 101**

**Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրի նույն մասնագիտության տարբեր աստիճաններում ուսումնառությունն արդյո՞ք համարվում է երկրորդ մասնագիտական կրթության ստացում.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 4-րդ մաս)

**Չարդ 102**

**Ովքե՞ր իրավունք ունեն ուսումնառությունը շարունակելու հաջորդ աստիճանի կրթական ծրագրով.**

Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ ստացած անձինք:



(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 5-րդ մաս)

### Չարդ 103

**Կարո՞ղ եմ արդյոք զուգակցվել արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերը.**

Չի արգելվում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենք, 8-րդ հոդված, 6-րդ մաս)

### Չարդ 104

**Ո՞ր մարմինն է հաստատում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը.**

Կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ՝ համապատասխան ոլորտների լիազորված մարմինների առաջարկությամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 1-ին մաս)

### Չարդ 105

**Ո՞ր դեպքում կարող է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում ընդգրկվել նոր մասնագիտություն.**

Միայն տվյալ մասնագիտության չափորոշիչի առկայության դեպքում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարդ 106

**Արհեստագործական ուսումնական հաստատության ո՞ր տեսակն է սահմանվում արհեստագործական կրթության համակարգում.**

Արհեստագործական ուսումնարան:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին պարբ.)

### Հարց 107

**Միջին մասնագիտական ուսումնական հաստատության ո՞ր տեսակն է սահմանվում միջին մասնագիտական կրթության համակարգում.**

Քոլեջ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 2-րդ մաս, 2-րդ պարբ.)

### Հարց 108

**Ո՞ր մարմիններն են պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների լիազորված պետական մարմինները.**

Որոշում է կառավարությունը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 109

**Ինչպե՞ս է կատարվում ընդունելությունը արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում.**

Առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով, օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մրցութային հիմունքներով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 110

**Ի՞նչ տեղեկությունների է պարտավոր ծանոթացնել դիմորդին արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը.**

Իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարդ 111

**Ո՞ր մարմինն է սահմանում պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 112

**Ի՞նչ հիմքով է իրագործվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակտիկաները (ուսումնական, արտադրական, ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային).**

Այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 113

**Ո՞ւմ կողմից է տրվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձի արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ.**

Տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կամ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կողմից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 1-ին մաս)

### Չարդ 114

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ավարտական փաստաթուղթ չէ.**

Լրացուցիչ կրթության հավաստագիրը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 2-րդ մաս)

### Ֆարց 115

**Ի՞նչ փաստաթուղթ է տրվում արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին.**

Ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 116

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարության իրավասություններից չէ.**

Հաստատում է մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

### Ֆարց 117

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարության իրավասություններից չէ.**

Հաստատում է ուսանողների (ունկնդիրների)՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

### Ֆարց 118

**Նշվածներից ո՞րը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններից չէ՝**

Հավանություն է տալիս արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությանը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

## Հարց 119

### **Նշվածներից ո՞րը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասություններից չէ՝**

Մասնակցում է շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհմանը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

## Հարց 120

### **Նշվածներից ո՞րն է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում՝ կառավարության լիազորած կառավարման այլ մարմինների իրավասություններից.**

Ուսումնասիրում են աշխատանքային շուկայի պահանջարկը և առաջարկություններ են ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմնին մասնագետների և նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ կետ)

## Հարց 121

### **Ո՞վ է ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի իրականացնում ուսանողների և ունկնդիրների ընդունելությունը, ապահովում նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը.**

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ)

## Չարդ 122

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության լիազորություններից չէ.**

Իրականացնում է ստեղծագործական, հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեություն:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ կետ)

## Չարդ 123

**Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են՝**

Հիմնադիրը, նրա լիազոր պետական մարմինը, հաստատության գործադիր մարմինը (տնօրեն) և ուսումնական հաստատության խորհուրդը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 2-րդ մաս)

## Չարդ 124

**Ո՞ր մարմինն է համարվում տվյալ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմին.**

Խորհուրդը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ մաս)

## Չարդ 125

**Ի՞նչ ժամկետով է ստեղծվում տվյալ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը.**

5 տարի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ, 1-ին պարբ.)

## Չարդ 126

**Ի՞նչ ներկայացուցչությամբ է ձևավորվում խորհուրդը.**

Մանկավարժական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ, 1-ին պարբ.)

#### Չարդ 127

##### **Ի՞նչ հիմքով է սահմանվում խորհրդի թվաքանակը.**

Տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, սակայն ոչ ավելի, քան 20 հոգի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ, 2-րդ պարբ.)

#### Չարդ 128

**Ո՞ր մարմնի լիազորության մեջ է մտնում հաստատության բյուջեի և ռազմավարական ծրագրերի հաստատումը.**

Խորհրդի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Չարդ 129

**Ո՞ր մարմնի լիազորության մեջ է մտնում հաստատության ուսման վարձի հաստատումը.**

Խորհրդի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Չարդ 130

**Կարո՞ղ են արդյոք ուսումնական հաստատությունում ձևավորվել գիտական խորհուրդներ, խորհրդակցական և վերահսկողություն իրականացնող մարմիններ.**

Այո, հիմնադրի որոշմամբ կամ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ մաս, 4-րդ պարբ.)

### Չարդ 131

**Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը ո՞վ է կնքում.**

Լիազորված մարմնի ղեկավարը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 132

**Ո՞վ կարող է ընտրվել կամ նշանակվել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն, բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների պետերի.**

Այն անձը, որն ունի արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 1-ին մաս)

### Չարդ 133

**Սահմանված են արդյո՞ք բացառություններ արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն ընտրվելու կամ նշանակվելու համար անհրաժեշտ արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունենալու պայմանի նկատմամբ.**

Այո, բացառությամբ ոստիկանության ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների պետերի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 1-ին մաս)

### Չարդ 134

**Ինչպե՞ս է ընտրվում արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը.**



Կառավարության հաստատած մրցութային կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 2-րդ մաս)

### Չարդ 135

**Ինչպե՛ս է նշանակվում արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրենը.**

Ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարդ 136

**Ինչպե՛ս է նշանակվում ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը.**

Ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարդ 137

**Ո՛վ կարող է մասնակցել արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցութին.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և Հավաստագիր ստացած անձը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 138

**Ո՛վ կարող է նշանակվել արհեստագործական և միջին մասնագիտական ոչ պետական ուսումնական հաստատության տնօրեն, ինչպես նաև ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավար.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և Հավաստագիր ստացած անձը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 4-րդ մաս)

#### Հարց 139

**Ո՞վ կարող է դիմել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար.**

Այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն, սահմանված կարգով ստացած վերապատրաստման վկայական և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Հարց 140

**Քանի՞ տարվա ստաժ պետք է ունենա արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար դիմող անձը.**

Վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ մասնագիտական առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Հարց 141

**Ո՞վ կարող է իրականացնել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար դիմած անձի վերապատրաստում.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ընտրված (երաշխավորված) կազմակերպությունները:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 6-րդ մաս)

#### Չարդ 142

**Կարո՞ղ է արդյոք արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրումն անցկացվել առանց քննության.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 143

**Կարո՞ղ է արդյոք արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրումն անցկացվել առանց փաստաթղթերի համապատասխանության ճանաչման.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 7-րդ մաս)

#### Չարդ 144

**Ո՞ր մարմինն է սահմանում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրման քննությունների կազմակերպման և հավաստագրման ընթացակարգերը.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 8-րդ մաս)

#### Չարդ 145

**Ո՞ր մարմինն է սահմանում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 8-րդ մաս)

#### Չարդ 146

**Ե՛րբ է հրապարակվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրման գործընթացի մասին հայտարարությունը.**

Քննություններն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 10-րդ մաս)

#### Չարդ 147

**Ինչպե՛ս է տարածվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրման գործընթացի մասին հայտարարությունը.**

Առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 10-րդ մաս)

#### Չարդ 148

**Ի՞նչ նպատակով է կազմվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագրման քննությունների հարցաշարի բովանդակությունը՝**

Կրթության բնագավառում իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական, ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ գիտելիքները և գործնական կարողությունները ստուգելու:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 11-րդ մաս)

#### Չարդ 149

**Ո՞ւմ է շնորհվում հավաստագիր.**

Հավաստագրման քննությունը հավաստագրման ընթացակարգով հանձնաժ անձին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 12-րդ մաս)

#### Չարդ 150

**Նշվածներից ո՞ր փաստաթուղթն է տնօրենի թեկնածուն ներկայացնում խորհրդին՝ արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար է.**

Ուսումնական հաստատության զարգացման հինգ տարվա ծրագիրը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 16-րդ մաս, 3-րդ կետ)

#### Չարդ 151

**Մինչև եր՞բ է պաշտոնավարում մրցույթում հաղթած և օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի ղեկավարի հետ աշխատանքային պայմանագիր կնքած արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենը.**

Մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ Հավաստագրի հնգամյա ժամկետի լրանալուց:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 18-րդ մաս)

#### Չարդ 152

**Մինչև եր՞բ է պաշտոնավարում մրցույթում հաղթած ուսումնական հաստատության արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանման ղեկավարը.**

Մինչև հավաստագրի ժամկետի լրանալը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 18-րդ մաս)

#### Չարդ 153

**Կարող է արդյո՞ք արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման իրավունք (Հավաստագիր)**

**ստացած անձը մինչև Հավաստագրի ժամկետի լրանալը դիմել և հավաստագրվել.**

Այո, սահմանված կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 19-րդ մաս)

#### **Ֆարց 154**

**Նշվածներից որ՞ն է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն առաջադրվելու և ընտրվելու (նշանակվելու) անձի իրավունքը սահմանափակող պայմաններից՝**

Դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 20-րդ մաս, 5-րդ կետ)

#### **Ֆարց 155**

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրեն առաջադրվելու և ընտրվելու (նշանակվելու) անձի իրավունքը սահմանափակող պայմաններից չէ.**

Կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ընդունել է երկքաղաքացիություն:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 20-րդ մաս)

#### **Ֆարց 156**

**Նշվածներից ո՞րը արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի լիազորություններից չէ՝**

Հրավիրում, կազմակերպում և մասնակցում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության արտաքին, ներքին գնահատմանն ու հավաստագրմանը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 18.1-րդ հոդված, 21-րդ մաս)

### Չարց 157

**Ո՛վ է իրականացնում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման կազմակերպումը.**

Տվյալ ուսումնական հաստատությունը կամ մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 1-ին մաս)

### Չարց 158

**Ո՛ր մարմինն է (մարմիններն են) իրականացնում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, լիազոր մարմինները:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարց 159

**Ի՞նչ միջոցներով են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, լիազոր մարմինները իրականացնում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողություն.**

Լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ՝ որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարց 160

**Ի՞նչ հիմքով կարող է իրականացվել արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեություն (կրթական ծրագրեր).**

Միայն լիցենզիայի առկայության դեպքում:

( «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

**Ֆարց 161**

**Ինչպե՞ս է իրականացվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեության լիցենզավորումը.**

Տվյալ կրթական ծրագրի յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 3-րդ մաս)

**Ֆարց 162**

**Ո՞ր դեպքում կարող է իրականացվել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների և կրթական ծրագրերի պետական հավատարմագրումը.**

Լիցենզիայի առկայության դեպքում՝ ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 4-րդ մաս)

**Ֆարց 163**

**Ո՞ր ծրագրերն են Հայաստանի Հանրապետության արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում ենթակա պետական հավատարմագրման.**

Արհեստավորի և մասնագետի կրթական ծրագրերը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 5-րդ մաս)

**Ֆարց 164**

**Ո՞ր փաստաթուղթն է հավաստում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների կրթության որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին.**



Պետական հավատարմագրման վկայականը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 7-րդ մաս)

**Չարդ 165**

**Ի՞նչ է հավաստում պետական հավատարմագրման վկայականը.**

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների կրթության որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 7-րդ մաս)

**Չարդ 166**

**Ինչպե՞ս են հավատարմագրվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնաճյուղերը.**

Ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող մասնագիտական ուսումնական հաստատության հայտի հիման վրա:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 8-րդ մաս)

**Չարդ 167**

**Ո՞ր փաստաթղթում է նշվում ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը.**

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում (դիպլոմում):

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 10-րդ մաս)

**Չարդ 168**

**Պետական հավատարմագրումից բացի ինչպիսի՞ հավատարմագրում կարող է ստանալ արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը.**

Հասարակական:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված, 11-րդ մաս)

#### Չարդ 169

**Նշվածներից որ՞ը չի համարվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողի իրավունքներից՝**

Ընտրելու կրթաթոշակ կամ նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցում ստանալու համակարգերից օգտվելու հնարավորությունից մեկը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 170

**Նշվածներից որ՞ը չի համարվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողի իրավունքներից՝**

Մասնակցել ուսումնական հաստատության տնօրենի հավաստագրման գործընթացին:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 171

**Նշվածներից որ՞ը չի համարվում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողի իրավունքներից՝**

Խորհրդի հաստատմանը ներկայացնել ուսումնական հաստատության զարգացման երիտասարդական միջոցառումների ծրագիրը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 172

**Ո՞ր մարմինն է սահմանում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողների պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը.**

Կառավարությունը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 1-ին մաս, 8-րդ կետ, 3-րդ պարբ.)

### Ֆարց 173

**Ակադեմիական արձակուրդում գտնվող ուսանողը պահպանում է իր ուսանողի իրավունքը.**

Այո:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)

### Ֆարց 174

**Ո՞ր դեպքում է ուսանողին տրվում ակադեմիական արձակուրդ.**

Առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 2-րդ մաս)

### Ֆարց 175

**Կարո՞ղ է արդյոք ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը վերականգնվել.**

Այո, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 176

**Որտեղի՞ց կարող է իրականացվել ուսանողի տեղափոխությունը պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն.**

Մեկ այլ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատությունից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 177

**Ի՞նչ իրավունքից է օգտվում ունկնդիրը՝ մասնագիտական կրթական ծառայություններ ստանալու մասով.**

Ուսանողների իրավունքից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված, 5-րդ մաս)

### Չարդ 178

**Ովքե՞ր են ընդգրկվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական կազմում.**

Դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 22-րդ հոդված, 2-րդ մաս)

### Չարդ 179

**Ո՞ր մարմինն է հաստատում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 22-րդ հոդված, 3-րդ մաս)

### Չարդ 180

**Ի՞նչ իրավունքով է հիմնադիր (հիմնադիրները) պետական արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրում գույք.**

Անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ պարբ.)

### Չարդ 181

**Ինչպե՛ս է Ֆինանսավորվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգը.**

Ըստ կառավարության սահմանած չափի և հատկացումների՝ պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդված, 2-րդ մաս)

### Չարդ 182

**Ո՞ր մարմինն է (մարմիններն են) արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում իրականացնում տնտեսական և ֆինանսական գործունեության վերահսկողություն.**

Լիազորված մարմինները՝ իրենց լիազորությունների սահմանում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդված, 5-րդ մաս)

### Չարդ 183

**Կարո՞ղ է արդյոք արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթարկվել աուդիտի (վերստուգման).**

Այո, կառավարության սահմանած կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդված, 6-րդ մաս)

### Չարդ 184

**Ինչպե՛ս կարող է ստուգվել արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը.**

Ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ կառավարության սահմանած կարգով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդված, 6-րդ մաս)

### Ֆարց 185

**Ինչպե՞ս է սահմանվում «կրթական ծրագրերի տեսչավորում» հասկացությունը.**

Հանրակրթության և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման և վերահսկողության գործընթաց:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված)

### Ֆարց 186

**Ո՞ր մարմինն է (մարմիններն են) համարվում կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացն իրականացնող պետական կառավարման մարմին(ներ).**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված)

### Ֆարց 187

**Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ո՞ր մարմնի իրավասությունն է հաստատել Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության տեսչավորման և հրապարակային հաշվետվությունների մշակման ու ներկայացման, ինչպես նաև ուսումնական հաստատությունների կրթական գործունեության գնահատման կարգերը.**

Հայաստանի Հանրապետության կառավարության:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված,  
1-ին մաս, 3-րդ կետ)

### Ֆարց 188

**Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ո՞ր մարմնի իրավասությունն է սահմանել կրթության բնագավառի օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միասնական քաղաքականության իրականացման ուղղությունները.**

Հայաստանի Հանրապետության կառավարության:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք,

**Չարդ 189**

**Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ո՞ր մարմնի իրավասությունն է կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը.**

Լիազորված մարմնի:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք,  
7-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ կետ)

**Չարդ 190**

**Կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացում ո՞ր մարմնի իրավասությունն է որոշել տեսչության գործունեության առաջնահերթ ուղղությունները.**

Լիազորված մարմնի:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք,  
7-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ կետ)

**Չարդ 191**

**Նշվածներից ո՞րն է կրթության պետական տեսչության նպատակներից.**

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման ապահովմանը նպաստելը:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք,  
8-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ)

**Չարդ 192**

**Ո՞ր մարմնի խնդիրն է ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության համակարգում պետական կրթական քաղաքականության իրականացման և կրթության զարգացման պետական ծրագրի կատարման վերահսկողության և մշտադիտարկման իրականացումը.**

Կրթության պետական տեսչության:

(«Կրթության պետական տեսչության մասին»  
ՀՀ օրենք, 8-րդ հոդված, 2-րդ մաս, 1-ին կետ)

### Ֆարց 193

**Ո՞ր մարմնի լիազորությունն է իր նպատակների և խնդիրների իրականացման համար ստուգել և ուսումնասիրել նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպարավական ձևից և ենթակայությունից.**

Կրթության պետական տեսչության:

(«Կրթության պետական տեսչության մասին»  
ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ)

### Ֆարց 194

**Ո՞ր մարմնի լիազորությունն է իր նպատակների և խնդիրների իրականացման համար գնահատել ուսումնական հաստատությունների կրթական ծառայությունների արդյունավետությունը (այդ թվում՝ սովորողների կողմից հանրակրթական և նախնական մասնագիտական ծրագրերի յուրացումը), վերլուծել այդ հաստատությունների գործունեությունը, ներկայացնել զարգացմանը նպաստող առաջարկություններ, ինչպես նաև վերահսկել դրանց իրականացումը.**

Կրթության պետական տեսչության:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք,  
9-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ կետ)

### Ֆարց 195

**Ինչպե՞ս է հրապարակվում կրթության պետական տեսչության գործունեության տարեկան հաշվետվությունը.**

Յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ իր տարեկան գործունեության մասին երեք ամսվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին, որն այն հրապարակում է <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 1-ին մաս)



**Չարդ 196**

**Նշվածներից ո՞րը կրթության պետական տեսուչների պարտավորություններից չէ.**

Վերահսկողական աշխատանքներում հրավիրել մեթոդիստի և փորձագետի:  
(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 1-ին մաս)

**Չարդ 197**

**Ու՞ր կարող են բողոքարկվել կրթության պետական տեսուչների որոշումներն ու գործողությունները.**

Կրթության գլխավոր պետական տեսուչին և (կամ) դատարան:  
(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 2-րդ մաս)

**Չարդ 198**

**Ու՞ր կարող են բողոքարկվել կրթության գլխավոր պետական տեսուչի որոշումներն ու գործողությունները.**

Լիազորված մարմին և (կամ) դատական կարգով:  
(Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 3-րդ մաս)

**Չարդ 199**

**Կրթության պետական տեսուչների անօրինական գործողության հետևանքով կրթական հաստատությանը պատճառված վնասը ենթակա՞ է արդյոք հատուցման.**

Այո, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 4-րդ մաս)

**Չարդ 200**

**Ինչպե՞ս է իրականացվում կրթության բնագավառի պետական տեսչավորման գործընթացը.**

Ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետությունում

ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգերին և ժամկետներին համապատասխան:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

#### Չարդ 201

**Ի՞նչն է հիմք համարվում կրթության պետական տեսչությանը թեմատիկ ստուգումների համար:**

Լիազորված մարմնի ղեկավարի հաստատած տարեկան աշխատանքային ծրագիրը:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 1-ին մաս)

#### Չարդ 202

**Հաստատված տարեկան աշխատանքային ծրագրի հիման վրա ի՞նչ է հաստատում կրթության գլխավոր պետական տեսուչը.**

Ստուգումների ժամանակացույցը:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Չարդ 203

**Ինչպե՞ս է իրականացվում թեմատիկ ստուգում.**

Ստուգում իրականացնելու մասին լիազորված մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա և հաստատված տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան՝ կրթության գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ տեսչության տարածքային մարմնի ղեկավարը տալիս է ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրեր:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 3-րդ մաս)

#### Չարդ 204

**Թեմատիկ ստուգումների ընթացքի և ժամկետների համար նախատեսված սահմանափակումները տարածվո՞ւմ են արդյոք թեմատիկ ստուգումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ լիազորված մարմնի ղեկավարի տված հանձնարարականների կատարման ստուգման ընթացքի և ժամկետի վրա.**

Չեն տարածվում:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 4-րդ մաս)

### Ֆարց 205

**Ի՞նչ է գործողություն է կատարում Հայաստանի Հանրապետության կրթության գլխավոր պետական տեսուչը կամ նրա հանձնարարությամբ տեսչության տարածքային մարմնի ղեկավարը՝ ուսումնասիրության ընթացքում կրթության բնագավառի օրենսդրության պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում.**

Պատշաճ ձևով համապատասխան ուսումնասիրվող սուբյեկտին նախազգուշացնում է կրթության բնագավառի օրենսդրության պահանջի խախտման մասին՝ նշելով խախտման հետևանքները վերացնելու միջոցառումները, այդ թվում՝ դրանց կատարման ժամկետը:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 206

**Ի՞նչ հետևանք կարող է ունենալ նախազգուշացումից հետո ստուգվող սուբյեկտի սահմանած ժամկետում խախտման հետևանքները չվերացնելը և (կամ) դրա վերաբերյալ պատշաճ ձևով չտեղեկացնելը.**

Հիմք է դառնում նոր ստուգումների իրականացման համար:

(«Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 207

**Ո՞րն է Հայաստանի Հանրապետության պետական լեզուն.**

Հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 208

**Ո՞րն է Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն.**

Գրական հայերենը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 209

**Ո՞րն է Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում.**

Աջակցում է հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 3-րդ մաս)

#### Ֆարց 210

**Ո՞րն է Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը հայերենի ուղղագրության հարցում.**

Նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 4-րդ մաս)

#### Ֆարց 211

**Ո՞րն է Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների լեզուների գործածության հարցում.**

Իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված, 5-րդ մաս)

#### Ֆարց 212

**Ինչպե՞ս է սահմանվում «պետական լեզու» հասկացությունը.**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված և պետության հոգածությամբ ու հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1.1-ին հոդված, 1-ին մաս, 2-րդ պարբ.)

#### Ֆարց 213

**Ինչպե՞ս է սահմանվում «պաշտոնական լեզու» հասկացությունը.**

Հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու:

( «Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1.1-ին հոդված, 1-ին մաս, 3-րդ պարբ.)

#### Ֆարց 214

##### **Ինչպե՞ս է սահմանվում «ցուցանակ» հասկացությունը.**

Կազմակերպության որևէ հատվածում տեղադրված հրապարակային գրվածք, որը պարունակում է տեղեկույթ կազմակերպության (ֆիրմայի) անվանման և (կամ) կազմակերպատիրավական ձևի և (կամ) ապրանքանշանի և (կամ) տվյալ աշխարհագրական և (կամ) վարչական և (կամ) քաղաքաշինական և (կամ) տնտեսական և (կամ) հասարակական և (կամ) միավորի անվանման և այլնի մասին:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 1.1-ին հոդված, 1-ին մաս, 11-րդ պարբ.)

#### Ֆարց 215

**Ո՞րն է դասավանդման և դաստիարակության լեզուն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում.**

Գրական հայերենը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 1-ին մաս)

#### Ֆարց 216

**Ինչպե՞ս կարող է կազմակերպվել հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում.**

Իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Ֆարց 217

**Ո՞ր մարմինը կարող է հիմնել Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն.**

Միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 3-րդ մաս)

#### Ֆարց 218

**Ինչպե՞ս են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում.**

Փոխադարձաբար ընդունելի լեզվով:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 219

**Նշվածներից ո՞րն է «Լեզվի մասին» ՀՀ օրենքով սահմանված որպես Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պարտավորություններից.**

Գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 2-րդ մաս, «ա» կետ)

### Ֆարց 220

**Նշվածներից ո՞րն է «Լեզվի մասին» ՀՀ օրենքով սահմանված որպես Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պարտավորություններից.**

Ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 2-րդ մաս, «գ» կետ)

### Ֆարց 221

**«Լեզվի մասին» ՀՀ օրենքով ի՞նչ պարտավորություն է սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերի համար.**

Պարտավոր են զուգակցել հայերենով:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 222

**Ի՞նչ հիմքերով է սահմանված «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը.**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

(«Լեզվի մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 3-րդ մաս)

### **Չարդ 223**

**Ի՞նչ հիմքով է նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող սովորողներին, ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին տրվում ակադեմիական արձակուրդ.**

Ըստ բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 2-րդ)

### **Չարդ 224**

**Ո՞ւմ է տրվում ակադեմիական արձակուրդ.**

Նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող սովորողներին, ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 2-րդ)

### **Չարդ 225**

**Որքա՞ն է ակադեմիական արձակուրդի տևողությունը.**

Մեկ օրացուցային տարի է, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 3-րդ)

### **Չարդ 226**

**Ո՞վ է կայացնում ակադեմիական արձակուրդ տալու մասին որոշումը.**

Ուսումնական հաստատության ղեկավարը (պետը, տնօրենը, ռեկտորը):

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական

մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 4-րդ)

### Հարց 227

**Կարո՞ղ են արդո՞ք պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող սովորողները, ուսանողները (մագիստրանտները) և ասպիրանտները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվել ուսուցման նույն համակարգում.**

Այո:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 5-րդ, 1-ին պարբ.)

### Հարց 228

**Ի՞նչ հիմքով են որոշվում վճարովի ուսուցմամբ ուսումնառող և ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողի, ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի կրթաթոշակ ստանալու կամ լրացուցիչ վճարումներ կատարելու պայմանները.**

Որոշվում է ուսումնական հաստատության և ուսանողի (մագիստրանտի) և ասպիրանտի միջև կնքված պայմանագրի համաձայն:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը», մաս 5-րդ, 2-րդ պարբ.)

### Հարց 229

**Ի՞նչ հիմքով են որոշվում կրթաթոշակներով ուսումնառող օտարերկրյա սովորողին, ուսանողին (մագիստրանտին) և ասպիրանտին ակադեմիական արձակուրդ տալու կարգը և պայմանները.**

Որոշվում են՝ համաձայն այդ երկրի հետ կնքած միջպետական համաձայնագրերի և պայմանագրերի:

(«ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողներին (մագիստրանտներին)



**Ֆարց 230**

**Ի՞նչ սկզբունքով է իրականացվում մեկից ավելի մասնագիտական կրթությունը.**

Իրականացվում է մասնագիտական հիմնական կրթական ծրագրին զուգահեռ (զուգահեռ կրթություն) կամ հաջորդականության սկզբունքով (հաջորդական կրթություն), որն ավարտվում է պետական ամփոփիչ ատեստավորմամբ և շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 2-րդ մաս)

**Ֆարց 231**

**Ինչպե՞ս է ավարտվում մեկից ավելի մասնագիտական կրթությունը.**

Պետական ամփոփիչ ատեստավորմամբ և շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 2-րդ մաս)

**Ֆարց 232**

**Որտե՞ղ կարող է հավակնորդը ստանալ մեկից ավելի մասնագիտական կրթություն.**

Ինչպես իր ուսումնառած/ուսումնառող, այնպես էլ մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող այլ հաստատություններում կամ կազմակերպություններում (հաստատություն):

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 5-րդ մաս)

**Ֆարց 233**

**Նշվածներից ո՞րը մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու պայմաններից չէ.**

Համարվում է տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) կամ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթաց:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 5-րդ մաս)

#### Ֆարց 234

**Նշվածներից ո՞ր դեպքում ուսանողը կարող է ստանալ զուգահեռ կրթություն.**

Ընդհանուր հիմունքներով՝ ցանկության դեպքում չկրկնելով ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 7-րդ մաս, 1-ին կետ)

#### Ֆարց 235

**Ո՞րն է համարվում ակադեմիական տարբերություն.**

Նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված, սակայն ուսանողի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաները ու առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 8-րդ մաս)

#### Ֆարց 236

**Ե՞րբ կարող է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում հիմնական կրթության հիմքով առկա ուսուցման բաժին ընդունված ուսանողը զուգահեռ կրթություն ստանալ հեռակա ուսուցման բաժնում.**

Չորրորդ կիսամյակն ավարտելուց հետո:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 10-րդ մաս)

### Ֆարց 237

**Ե՛րբ է հավակնորդը դիմում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար.**

Ուսումնական տարվա սկզբին (ըստ կրթության ձևի) կամ կիսամյակին նախորդող աշխատանքային 15 օրվա ընթացքում՝ դիմում է ներկայացնում տվյալ հաստատության տնօրենին (ռեկտորին):

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 16-րդ մաս)

### Ֆարց 238

**Ո՛ր մարմինն է քննում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդի դիմումը.**

Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված ընդունող հանձնաժողովը:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 18-րդ մաս.)

### Ֆարց 239

**Ովքե՛ր են ընդգրկված մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդի դիմումները քննող հանձնաժողովում.**

Հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը՝ որպես նախագահ և համապատասխան մասնագիտության գծով դասախոսական կազմի ներկայացուցիչներ:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 18-րդ մաս, 2-րդ պարբ.)

### Ֆարց 240

**Ի՞նչ ժամկետներում են քննարկվում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու հավակնորդների դիմումները.**

Կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 18-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Ֆարց 241

**Ինչպե՞ս է տրվում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու հավակնորդների ժամանակավոր հրամանը.**

Հաստատության տնօրենը (ռեկտորը), հանձնաժողովի եզրակացության հիման վրա, տալիս է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որին կցվում է ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 20-րդ մաս, 1-ին պարբ.)

#### Ֆարց 242

**Ի՞նչ ժամկետ է սահմանված մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու հավակնորդի ակադեմիական տարբերությունները հանձնելու համար.**

Առավելագույն ժամկետը մեկ ամիս է:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 20-րդ մաս, 1-ին պարբ.)

#### Ֆարց 243

**Ի՞նչ ժամկետում է տնօրենը (ռեկտորը) պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնում ամբողջական տեղեկատվություն՝ մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար ընդունվածների վերաբերյալ.**

Ուսնողին(ներին) հրամանագրելուց հետո հնգօրյա ժամկետում:

(«Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը», 22-րդ մաս)

#### Ֆարց 244

**Ի՞նչ միջոցներից է ուսանողական նպաստը փոխհատուցում (լրիվ կամ մասնակիորեն) ուսանողի ուսման վճարը՝**

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 2-րդ մաս)

#### Հարց 245

**Ինչպե՞ս է սահմանվում պետության կողմից տրվող ուսանողական նպաստ ստացող ուսանողների թիվը.**

Ըստ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների՝ ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, որը պահպանվում է ամբողջ ուսումնառության ընթացքում:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 3-րդ մաս)

#### Հարց 246

**Ո՞ւմ է պետության կողմից տրվում ուսանողական նպաստ.**

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 4-րդ մաս)

#### Հարց 247

**Ո՞ր մարմինն է ընդունում ՀՀ պետական բյուջեից չֆինանսավորվող ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ հատկացնելու մասին որոշումը.**

Հիմնադիրը:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 4-րդ մաս, 3-րդ կետ)

### Ֆարց 248

**Նշվածներից սոցիալական ո՞ր խմբին պետության կողմից չի տրամադրվում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում.**

Հաշմանդամություն ունեցող ծնող և (կամ) երեխա ունեցող և նրանց միակ խնամատար ճանաչված սովորողները:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 6-րդ մաս, 3-րդ կետ)

### Ֆարց 249

**Եր՞բ է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում իրականացվում փոխատեղումները.**

Ուսումնական կիսամյակն սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 7-րդ մաս)

### Ֆարց 250

**Նշված ո՞ր կարգավիճակի դեպքում ուսումնական հաստատությունն իր միջոցների հաշվին չի կատարում ուսման վարձի գեղչ.**

1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողները:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 9-րդ մաս)

### Ֆարց 251

**Նշվածներից որո՞նք ընդգրկված չեն ուսումնական հաստատության միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման հնարավորություն տվող վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տաս տոկոսի կազմում.**

Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողները:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 9-րդ մաս)

#### Հարց 252

**Նշվածներից որ՞ը ընդգրկված չէ ուսումնական հաստատության միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցման հնարավորություն տվող վճարովի հիմունքով սովորող ուսանողական համակազմի մինչև տաս տոկոսի կազմում.**

Պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 9-րդ մաս)

#### Հարց 253

**Ե՞րբ և ինչպե՞ս են քննարկվում ուսանողների ուսման վճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները և համապատասխան փաստաթղթերը.**

Հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում՝ ուսումնական հաստատության կողմից կառավարման մարմնի (խորհրդի) նիստում՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 12-րդ մաս)

#### Հարց 254

**Ո՞ր մարմինն է հաստատում ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անվանական կազմը.**

Ուսումնական հաստատության կողմից կառավարման մարմինը:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 12-րդ մաս)

**Հարց 255**

**Ո՞ր մարմինն է իրականացնում ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունը.**

Պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 14-րդ մաս)

**Հարց 256**

**Միջին մասնագիտական ուսումնական հաստատության ո՞ր ուսանողին է մրցութային կարգով տրվում պետական կրթաթոշակ:**

Գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 15-րդ մաս)

**Հարց 257**

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատության ո՞ր ուսանողին է տրվում պետական կրթաթոշակ.**

Ուսանողական նպաստի համակարգում ընդունված ուսանողին:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 17-րդ մաս)

**Հարց 258**

**Եր՞բ է վերանայվում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսանողի պետական կրթաթոշակ տրամադրելու հարցը.**

Հաջորդ կիսամյակն սկսելուն նախորդող երկու շաբաթվա ընթացքում՝ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստում:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր



իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 21-րդ մաս)

#### Չարդ 259

**Կարո՞ղ է արդյոք ուսումնական հաստատությունը սեփական միջոցների հաշվին սահմանել ներքուլեջային կրթաթոշակներ.**

Այո:

(«Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու մասին կարգ», 25-րդ մաս)

#### Չարդ 260

**Նշվածներից ո՞ր հիմունքով է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում կատարվում օտարերկրացիների ընդունելությունը.**

Պայմանագրային հիմունքով (վճարովի):

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ՈՒՀ-ներում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», 6-րդ մաս)

#### Չարդ 261

**Ո՞ր օտարերկրացիներն են մասնակցում նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության նախապատրաստական դասընթացներին.**

Օտարերկրացիները, որոնք չեն տիրապետում հայերենին, ռուսերենին կամ անգլերենին:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ՈՒՀ-ներում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», 15-րդ մաս)

#### Չարդ 262

**«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգով» ընդունված ուսանողների հեռացման (ազատման) և շարժունության մասին տեղեկությունները եր՞բ են ուսումնական հաստատությունները ներկայացնում նախարարություն.**

Համապատասխան որոշում ընդունելուց հետո երկշաբաթյա ժամկետում:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ՈւՎՀ-ներում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», 19-րդ մաս)

### Հարց 263

**Ուսումնական հաստատությունը առանձին ի՞նչ դրույթ է պարտավոր ներառել օտարերկրացու հետ կնքվող պայմանագրում.**

Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների վերաբերյալ:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ՈւՎՀ-ներում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», 22-րդ մաս)

### Հարց 264

**Ո՞րն է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման նպատակը.**

Որոշել շրջանավարտների մասնագիտական որակավորման մակարդակը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 2-րդ մաս)

### Հարց 265

**Ի՞նչ նպատակով է մասնագիտական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր մասնագիտության գծով ձևավորվում պետական որակավորող հանձնաժողով.**

Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 3-րդ մաս)

### Հարց 266

**Կարո՞ղ է արդյոք մի քանի մասնագիտության գծով ձևավորվել պետական որակավորման մեկ հանձնաժողով.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 3-րդ մաս)

### Հարց 267

**Ո՞ւմ գործառույթն է ստուգել և գնահատել մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների, նրանց ստացած մասնագիտության գծով ինքնուրույն աշխատանքային գործունեություն իրականացնելու պատրաստականությունը.**

Պետական որակավորող հանձնաժողովի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 4-րդ մաս, 1-ին կետ)

### Հարց 268

**Ո՞ւմ գործառույթն է որոշել շրջանավարտներին համապատասխան որակավորում շնորհելու և պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) տալու հարցը.**

Պետական որակավորող հանձնաժողովի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 4-րդ մաս, 2-րդ կետ)

### Հարց 269

**Ո՞ր ուսանողներն են թույլատրվում պետական ամփոփիչ ստուգման.**

Այն ուսանողները, ովքեր կատարել են տվյալ մասնագիտության ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով նախատեսված բոլոր պահանջները:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 14-րդ մաս)

### Ֆարց 270

**Որքա՞ն է սահմանվում տվյալ մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգումների միջև եղած ժամանակահատվածը.**

5-7 օր:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 16-րդ մաս)

### Ֆարց 271

**Ինչպե՞ս է կատարվում դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կամ պետական քննությունների հանձնումը.**

Պետական որակավորող հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի 2/3-ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 18-րդ մաս)

### Ֆարց 272

**Ինչպե՞ս են գնահատվում դիպլոմային նախագծի (աշխատանքի) և պետական քննության արդյունքները.**

Գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 21-րդ մաս)

### Ֆարց 273

**Ի՞նչ հիմքով է դիպլոմային նախագիծը (աշխատանք) պաշտպանած կամ պետական քննությունները դրական հանձնած ուսանողին շնորհվում համապատասխան որակավորում և տրվում պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/.**

Պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 22-րդ մաս)

#### Չարդ 274

**Մասնագիտական ուսումնական հաստատության ո՞ր շրջանավարտին է տրվում գերազանցության դիպլոմ.**

Որը ուսումնական պլանով նախատեսված առարկաների տարբերակված ստուգարքների (կիսամյակային գնահատականների) և քննությունների 75%-ից ոչ պակասը հանձնել է «գերազանց», իսկ մնացած առարկաները՝ «լավ» գնահատականներով, միաժամանակ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) պաշտպանել կամ պետական քննությունները հանձնել է «գերազանց» գնահատականներով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 23-րդ մաս)

#### Չարդ 275

**Այն դեպքերում, երբ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) գնահատվում է «անբավարար», պետական որակավորող հանձնաժողովը որոշում է՝**

Կարող է արդյոք ուսանողը, հաշվի առնելով հանձնաժողովի դիտողությունները, պաշտպանել դիպլոմային նույն նախագիծը (աշխատանքը) երկրորդ անգամ, թե պետք է մշակի համապատասխան ամբիոնի կողմից տրվող նոր թեմա կամ հանձնի պետական քննություն:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 26-րդ մաս)

#### Չարդ 276

**Պետական քննությունից «անբավարար» գնահատական ստանալը զրկո՞ւմ է ուսանողին մյուս պետական քննությունները հանձնելու իրավունքից.**

Ոչ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 26-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Չարդ 277

**Պետական քննությունները վերահանձնող ուսանողը ո՞ր առարկաներից է հանձնում քննություններ.**

Այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 27-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### **Չարց 278**

**Ո՞ր մարմինն է տալիս թույլտվություն՝ մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց երեք տարի հետո պետական քննությունները վերահանձնելու համար.**

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 27-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### **Չարց 279**

**Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենը ի՞նչ ժամկետով կարող է երկարացնել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) կամ պետական քննությունները հարգելի պատճառով (փաստաթղթերով հաստատված) չպաշտպանած կամ չհանձնած ուսանողի ուսուցման ժամկետը.**

Մինչև պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքի հաջորդ քննաշրջանը, բայց մեկ տարուց ոչ ավելի:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 28-րդ մաս)

#### **Չարց 280**

**Ի՞նչ փաստաթուղթ է տրվում դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին.**

Ուսումնառության լրիվ կուրսը ավարտելու մասին տեղեկանք և սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 29-րդ մաս)

### Հարց 281

**Երկրորդ անգամ դիպլոմային նախագիծը (աշխատանքը) չպաշտպանած կամ պետական քննությունները չհանձնած ուսանողին՝**

Թույլատրվում է վերականգնվել տվյալ մասնագիտության վերջին կուրսում՝ կրկնելով այդ ամբողջ կուրսի ծրագրային նյութը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 30-րդ մաս)

### Հարց 282

**Պետական որակավորող հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո, ի՞նչ ժամկետներում է հանձնաժողովի նախագահը հաշվետվությունը ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմին և պատճենը նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենին.**

Մեկ շաբաթվա ընթացքում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 31-րդ մաս)

### Հարց 283

**Ի՞նչ փաստաթղթով է հաստատվում պետական որակավորող հանձնաժողովի որոշմամբ շրջանավարտների համապատասխան որակավորման և պետական ավարտական նմուշի փաստաթղթի (դիպլոմի) շնորհումը և ուսումնական հաստատության ավարտումը.**

Մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը», 32-րդ մաս)

### Հարց 284

**Ի՞նչ հիմքով է կատարվում ուսանողի տեղափոխումը մեկ ուսումնական հաստատությունից մեկ այլ ուսումնական հաստատություն.**

Կատարվում է երկու ուսումնական հաստատությունների տնօրենների համաձայնությամբ:

(«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ», 3-րդ մաս)

#### Չարդ 285

**Ե՛րբ է թույլատրվում միջին մասնագիտական ուսումնական հաստատության հեռակա ուսուցման բաժնից առկա ուսուցման բաժին և առկա ուսուցման բաժնից հեռակա ուսուցման բաժին հիմնական կրթության հիմքով ընդունված ուսանողի տեղափոխումը.**

Չորրորդ կիսամյակն ավարտելուց հետո, եթե տվյալ կրթական ծրագրի իրականացման ժամկետները համապատասխանում են:

(«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ», 4-րդ մաս, 2-րդ պարբ.)

#### Չարդ 286

**Ո՛ր դեպքում կարող է կատարվել տեղափոխումը.**

Եթե դրա արդյունքում, համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը պահպանվում է:

(«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ», 6-րդ մաս, 3-րդ պարբ.)

#### Չարդ 287

**Ուսումնական հաստատության վերակազմակերպման կամ լուծարման դեպքում ո՛ր մարմինն է կազմակերպում այլ ուսումնական հաստատություն ուսանողի տեղավորումը.**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

(«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ», 7-րդ մաս)

#### Չարդ 288

**Ինչպե՛ս է կատարվում հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունից ուսանողի տեղափոխումը պետական ուսումնական հաստատություն.**



ՀՀ կրթության և գիտության նախարարության թույլտվությամբ՝ ընդունող ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ:

(«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգ», 8-րդ մաս)

#### Ֆարց 289

**Ակադեմիական կամ նպատակային արձակուրդում գտնվող, ինչպես նաև «Զինապարտության մասին» ՀՀ օրենքին համապատասխան տարկետում ստացած և պարտադիր զինվորական ծառայության զորակոչված ուսանողը ինչ հիմքով է ազատվում ուսանողական պարտականությունների կատարումից.**

Հաստատության տնօրենի (ռեկտորի) հրամանով՝ պահպանելով Հաստատությունում իր ուսման տեղը և ուսանողական իրավունքը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 6 -րդ մաս)

#### Ֆարց 290

**Ինչպե՞ս է ուսումը շարունակում ակադեմիական արձակուրդից, հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդներից վերադարձած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված ուսանողը.**

Նույն Հաստատությունում և նույն մասնագիտությամբ (մասնագիտացմամբ)՝ Հաստատություն վերադառնալու օրվան հաջորդող այն կիսամյակից և կրթական ծրագրի այն փուլից, որտեղից ուսումն անավարտ է թողել:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 7-րդ մաս)

#### Ֆարց 291

**Ի՞նչ հիմունքներով է իրականացվում Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած և այլ մասնագիտություն (մասնագիտացում) տեղափոխված անձի ուսումնառությունը.**

Վճարովի հիմունքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողից, անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական ու նպատակային արձակուրդից վերադարձած ուսանողից, ինչպես նաև այն դեպքերի, երբ տվյալ տարվա համար պետական կառավարման լիազորված մարմնի կողմից Հաստատությանը հատկացվել են միայն անվճար տեղեր և առկա է թափուր տեղ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 9-րդ մաս)

### Հարց 292

**Ե՞րբ կարող է Հաստատությունից հեռացված անձը իր ուսանողական իրավունքը վերականգնելու համար դիմել Հաստատություն.**

Հեռացման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերանալուց հետո:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 12-րդ մաս)

### Հարց 293

**Ինչպե՞ս է ներկայացվում ուսանողական իրավունքը վերականգնելու համար դիմումը.**

Կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն նախորդող և հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ այն Հաստատության տնօրենին (ռեկտորին), որտեղ դիմողը ցանկանում է վերականգնել իր ուսանողական իրավունքը:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 14 -րդ մաս)

### Հարց 294

**Ի՞նչ ժամկետներում կարող է ուսման վճարը չվճարելու հիմքով հեռացված անձը վերականգնել ուսանողական իրավունքը.**

Ազատման/հեռացման հրամանի օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմում ներկայացնելու և վարձավճարը վճարելու դեպքում կարող է

շարունակել իր ուսումնառությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը համընկնում են կիսամյակային քննաշրջանի հետ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 15-րդ մաս)

#### **Չարդ 295**

**Ո՞ր դեպքում է հաստատության տնօրենը հրամանագրում հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողին.**

Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը», 22-րդ մաս)

#### **Չարդ 296**

**Ինչպե՞ս է ձևավորվում հաստատության խորհուրդը.**

Հաստատության մանկավարժական կազմի, ուսանողության, հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից առաջադրված ներկայացուցիչներից:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը», 3-րդ մաս)

#### **Չարդ 297**

**Ինչպե՞ս է ընտրվում Խորհրդի նախագահը.**

Խորհուրդն իր կազմից /բացառությամբ ուսանողության ներկայացուցիչներից/, փակ քվեարկությամբ ընտրում է Խորհրդի նախագահ՝ քվեարկությանը մասնակցած անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը», 10-րդ մաս)

## Հարց 298

### **Ե՞րբ են գումարվում Խորհրդի նիստերը.**

Հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում՝ Խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Հաստատության տնօրենի կամ Խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

(«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության Խորհրդի ձևավորման կարգը», 13-րդ մաս)

## Հարց 299

### **Կրթության ի՞նչ հիմքով է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում կատարվում ընդունելությունը.**

Առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրթություն ունեցող, իսկ հեռակա ուսուցմամբ ընդունելությունը՝ առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 2-րդ մաս)

## Հարց 300

### **Առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար ի՞նչ ժամկետներում են ընդունվում դիմորդի փաստաթղթերը.**

Ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը (ոլորտային մասնագիտություններով՝ Հաստատության սահմանած ընդունելության քննության օրվանից 2 օր առաջ, բայց ոչ ուշ, քան օգոստոսի 23-ը):

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 7-րդ մաս)

## Հարց 301

### **Ե՞րբ է իրականացվում անվճար և վճարովի ուսուցման տեղերի մրցույթը.**

Օգոստոսի 26-27-ը:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 8-րդ մաս)

### Ֆարց 302

**Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում Հաստատությունում տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է՝**

Ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 9-րդ մաս)

### Ֆարց 303

**Դիմորդը քանի՞ մասնագիտության հայտագրմամբ կարող է դիմել Հաստատություն ընդունվելու համար.**

Մինչև 2՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 20-րդ մաս)

### Ֆարց 304

**Ի՞նչ հիմքերով է Հաստատության տնօրենը մրցույթով անցած դիմորդներին հրամանագրում որպես ուսանող.**

Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ՈՒՀ-ների ընդունելության կարգը», 47-րդ մաս)

### Ֆարց 305

**Որքա՞ն է սահմանվում Հաստատության ուսումնական խմբում ուսանողների թիվը.**

Առկա (ստացիոնար) ուսուցման համար մինչև 25, հեռակա ուսուցման համար՝ մինչև 20 մարդ:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը», 51-րդ մաս)

### **Չարդ 306**

**Հեռակա ուսուցման համար ի՞նչ ժամկետներում են ընդունվում դիմորդի փաստաթղթերը.**

Ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 25-ը:

(«ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը», 7-րդ մաս)

### **Չարդ 307**

**Ի՞նչ է պետական կազմակերպությունը.**

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 1-ին մաս)

### **Չարդ 308**

**Կարո՞ղ է պետական կազմակերպությունը հանդիսանալ այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից.**

Կարող է միայն հիմնադրի որոշմամբ:

( «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 3–րդ հոդված, 5-րդ մաս)

### **Չարդ 309**

**Ինչպե՞ս է ձևավորվում պետական կազմակերպության սեփականությունը.**

Կազմակերպության հիմնադրման ժամանակ եւ հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաեւ պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված եւ ձեռք բերված գույքից:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
4-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 310

**Հիմնադիրն ունի՝ արդյոք իրավունքներ պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ.**

Չունի, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
4-րդ հոդված, 3-րդ մաս)

### Ֆարց 311

**Ո՞վ է կրում պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը.**

Պետական կազմակերպությունը:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, 4-րդ մաս)

### Ֆարց 312

**Ի՞նչ կարգով պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել.**

Դատական կարգով:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 4, 5-րդ մաս)

### Ֆարց 313

**Իրավունք ունի՞ պետական կազմակերպությունն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման.**

Չունի:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
5-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին պարբ.)

### Ֆարց 314

**Ի՞նչ ժամկետ կարող է սահմանվել ամրացված գույքի վարձակալության համար.**

Չի կարող սահմանվել 1 տարուց ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
5-րդ հոդված, 3-րդ մաս, 2-րդ պարբ)

#### Չարդ 315

**Ու՛մ են պատկանում պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները.**

Հիմնադրի սեփականությունն են:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
5-րդ հոդված, 3-րդ մաս, 4-րդ պարբ.)

#### Չարդ 316

**Ինչպե՛ս է օգտագործվում պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը.**

Նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
6-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Չարդ 317

**Ո՛վ է սահմանում պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը:**

Պետական կազմակերպության հիմնադիրը:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 2-րդ մաս)

#### Չարդ 318

**Ի՞նչ կարգով է պետական կազմակերպությունը վճարում հարկերը, տուրքերը եւ պարտադիր այլ վճարները.**

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»  
ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 5-րդ մաս)



### Ֆարց 319

**Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է՝**

Իրեն պատկանող գույքով:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 1-ին մաս)

### Ֆարց 320

**Ինչպե՞ս է ստեղծվում պետական կազմակերպությունը.**

Հիմնադրման, ինչպես նաեւ պետական հիմնարկի կամ հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպման միջոցով:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 1-ին մաս)

### Ֆարց 321

**Ո՞վ կարող է հանդիսանալ պետական կազմակերպության հիմնադիր.**

Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 2-րդ մաս)

### Ֆարց 322

**Ե՞րբ է պետական կազմակերպությունն ստեղծված համարվում.**

Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 2-րդ մաս)

### Ֆարց 323

**Ո՞րն է հանդիսանում պետական կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը.**

Կանոնադրությունը:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 1-ին մաս)

#### Ֆարց 324

**Ո՛վ է իրականացնում պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը:**

Գործադիր մարմինը:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, 1-ին մաս)

#### Ֆարց 325

**Կարո՞ղ է պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք.**

Չի կարող, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 15, 3-րդ մաս)

#### Ֆարց 326

**Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում՝**

իր մեղքով պետական կազմակերպությանը եւ (կամ) պետությանը պատճառած վնասի համար:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
15-րդ հոդված, 4-րդ մաս)

#### Ֆարց 327

**Ո՞ր դեպքում է իրավասու մարմնի որոշմամբ դադարեցվում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները.**

Եթե լրացել է նրա 65 տարին:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 16, 3-րդ մաս)

### Չարդ 328

**Ո՛վքեր կարող են լինել պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամ.**

Միայն ֆիզիկական անձինք:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 18, 2-րդ մաս)

### Չարդ 329

**Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների քանի՞ տոկոսը պետք է կազմեն սովորողները.**

Ոչ պակաս, քան քսանհինգ տոկոսը:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
18-րդ հոդված, 4-րդ մաս)

### Չարդ 330

**Ի՞նչ հիմքով է կատարվում պետական կազմակերպության խոշոր գործարքը.**

Լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,  
հոդված 22, 2-րդ մաս)

### Չարդ 331

**Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել՝**

100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

(«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 24. 1-ին մաս)

### Չարդ 332

**Ինչպե՞ս է սահմանվում «կրթության որակ» հասկացուցյունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների.

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 1.10-րդ կետ)

### **Չարդ 333**

**Ինչպե՞ս է սահմանվում «նպատակային ուսուցում» հասկացությունը «Կրթության մասին» ՀՀ օրենքում.**

Մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային եւ կարեւորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում.

(«Կրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 27-րդ կետ)

## **ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ**

### **Չարդ 1**

**Հանրային իշխանությունը սահմանափակված է.**

մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք.

(ՀՀ Սահմ. հոդված 3-րդ, մաս 3-րդ)

### **Չարդ 2**

**Ինչպե՞ս է իրականացվում պետական իշխանությունը.**

Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա.

(ՀՀ Սահմ. հոդված 4-րդ)

### Հարց 3

**Ինչպիսի՞ գործողություններ են իրավասու կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք՝**

միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով.

(«Սահմ. հոդված 6-րդ, մաս 1-ին)

### Հարց 4

**Եր՞բ են ուժի մեջ մտնում օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն՝**

Օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո.

(«Սահմ. հոդված 6-րդ, մաս 3-րդ)

### Հարց 5

**Ինչպե՞ս են անցկացվում Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները.**

Ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ.

(«Սահմ. հոդված 7-րդ)

### Հարց 6

**Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են.**

գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցական համակարգը.

(«Սահմ. հոդված 8-րդ, մաս 1-ին)

### Հարց 7

**Ինչպե՞ս է իրականացվում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը.**

միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով.

(«Սահմ. հոդված 13-րդ)

## Չարդ 8

**Ի՞նչ են ապահովում Հայաստանի Հանրապետության զինված ուժերը.**

Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը.

(ՀՀ Սահմ. հոդված 14-րդ, մաս 1-ին)

## Չարդ 9

**Ո՞վ է պարտավոր մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը.**

յուրաքանչյուր քաղաքացի՝ օրենքով սահմանված կարգով.

(ՀՀ Սահմ. հոդված 14-րդ, մաս 3-րդ)

## Չարդ 10

**Նշվածներից ո՞րն է գտնվում պետության հոգածության և պաշտպանության ներքո.**

Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը.

(ՀՀ Սահմ. հոդված 15-րդ, մաս 2-րդ)

## Չարդ 11

**Հայաստանի Հանրապետությունը ո՞ր եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունն է ճանաչում հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում.**

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու.

(ՀՀ Սահմ. հոդված 18-րդ, մաս 1-ին)

## Չարդ 12

**Ի՞նչ հիմքով է Հայաստանի Հանրապետությունը նպաստում այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը.**

միջազգային իրավունքի հիման վրա.

(ՀՀ Սահմ. հոդված 19-րդ, մաս 2-րդ)

### Չարդ 13

#### **Հայաստանի Հանրապետության զինանշանն է.**

Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն.

(ՀՀ Սահմ. 21-րդ հոդվ., մաս 2-րդ)

### Չարդ 14

#### **Ո՛վ կարող է դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի.**

ոչ ոք չի կարող.

(ՀՀ Սահմ. հոդված 24-րդ, մաս 3-րդ)

### Չարդ 15

**Կարո՞ղ է արդյոք Բժշկության և կենսաբանության ոլորտներում իրականացվել մասնավորապես՝ եվգենիկական փորձեր, մարդու օրգաններն ու հյուսվածքները դարձնել շահույթի աղբյուր, մարդու վերարտադրողական կլոնավորում.**

արգելվում են.

(ՀՀ Սահմ. հոդված 25-րդ, մաս 3-րդ)

### Չարդ 16

**Կարո՞ղ է արդյոք անձը զրկվել անձնական ազատությունից միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները.**

ոչ ոք չի կարող.

(ՀՀ Սահմ. հոդված 27-րդ, մաս 6-րդ)

### Չարդ 17

#### **Ո՛վ ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք.**

յուրաքանչյուր ոք.

(ՀՀ Սահմ. հոդված 34-րդ, մաս 1-ին)

### Չարդ 18

**Ինչպե՞ս պետք է կատարվի անձնական տվյալների մշակումը.**

բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ.

(«Սահմ. հոդված 34-րդ, մաս 2-րդ)

#### Հարց 19

**Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին և պահանջելու՝**

ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում.

(«Սահմ. հոդված 34-րդ, մաս 3-րդ)

#### Հարց 20

**Ո՞ր դեպքում կարող է սահմանափակվել անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը.**

միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով.

(«Սահմ. հոդված 34-րդ, մաս 4-րդ)

#### Հարց 21

**Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են՝**

հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին.

(«Սահմ. հոդված 36-րդ, մաս 1-ին)

#### Հարց 22

**Ո՞վ ունի կրթության իրավունք.**

յուրաքանչյուր ոք.

(«Սահմ. հոդված 38-րդ, մաս 1-ին)

#### Հարց 23

**Ի՞նչ իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը.**



Օրենքով.

(ՀՀ Սահմ. հոդված 38-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 24

**Ո՞ր ուսումնական հաստատություններում է միջնակարգ կրթությունն անվճար.**

պետական.

(ՀՀ Սահմ. հոդված 38-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 25

**Ո՞վ ունի պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք.**

յուրաքանչյուր ոք՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, մրցութային հիմունքներով.

(ՀՀ Սահմ. հոդված 38-րդ, մաս 2-րդ)

#### Չարդ 26

**Ի՞նչ հիմքով կարող է սահմանափակվել կարծիքի արտահայտման ազատությունը.**

միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով.

(ՀՀ Սահմ. հոդված 42-րդ, մաս 3-րդ)

#### Չարդ 27

**Կարո՞ղ է արդյոք անձը ազատորեն մասնակցել խաղաղ, առանց զենքի հավաքներին և կազմակերպել դրանք.**

Այո, յուրաքանչյուր ոք իրավունք ունի.

(ՀՀ Սահմ. հոդված 44-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 28

**Ո՞ր պահից ազգությամբ հայերը իրավունք ունեն ձեռք բերել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն.**

Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից.

(ՀՀ Սահմ. հոդված 47-րդ, մաս 3-րդ)

### Հարց 29

**Կարո՞ղ են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք ընտրել և ընտրվել, ինչպես նաև մասնակցել հանրաքվեին.**

ոչ, իրավունք չունեն.

(ՀՀ Սահմ. հոդված 48-րդ, մաս 4-րդ)

### Հարց 30

**Ո՞վ իրավունքի ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության.**

յուրաքանչյուր ոք.

(ՀՀ Սահմ. հոդված 50-րդ, մաս 1-ին)

### Հարց 31

**Կարո՞ղ է արդյոք քաղաքացին պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին ստանալ տեղեկություններ և ծանոթանալ փաստաթղթերին.**

այո, յուրաքանչյուր ոք իրավունք ունի.

(ՀՀ Սահմ. հոդված 51-րդ, մաս 1-ին)

### Հարց 32

**Ի՞նչ հիմքով կարող է սահմանափակվել տեղեկություններ ստանալու իրավունքը.**

միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

(ՀՀ Սահմ. հոդված 51-րդ, մաս 2-րդ)

### Հարց 33

**Կարելի՞ է մինչև տասնվեց տարեկան երեխաներին ընդունել մշտական աշխատանքի.**

ոչ, արգելվում է.

(ՀՀ Սահմ. հոդված 57-րդ, 4-րդ մաս)

#### Չարդ 34

**Կարո՞ղ է աշխատանքը պարտադիր կամ հարկադիր լինել.**

ոչ, արգելվում է:

(ՀՀ Սահմ. հոդված 57-րդ, 5-րդ մաս, 1-ին նախադ)

#### Չարդ 35

**Նշվածներից ո՞րն է համարվում պարտադիր կամ հարկադիր աշխատանք՝**

չկատարած աշխատանքի ապահովման համար արտաժամյա աշխատանքը.

(ՀՀ Սահմ. հոդված 57-րդ, 5-րդ մաս)

#### Չարդ 36

**Ո՞ր դեպքում կարող է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով իրականացվել սեփականության օտարումը.**

օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

(ՀՀ Սահմ. հոդված 60-րդ, մաս 5-րդ)

#### Չարդ 37

**Ովքե՞ր չեն կարող օգտվել հողի սեփականության իրավունքից.**

օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

(ՀՀ Սահմ. հոդված 60-րդ, մաս 6-րդ)

#### Չարդ 38

**Ո՞ր դեպքում յուրաքանչյուր ոք իրավունք ունի վնասի հատուցման.**

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի.

(ՀՀ Սահմ. հոդված 62-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 39

**Ո՞ր դեպքերում է իրավաբանական օգնությունը ցույց տրվում պետական միջոցների հաշվին.**

օրենքով սահմանված դեպքերում.

(«Սահմ. հոդված 64-րդ, մաս 1-ին, 2-րդ նախադասությւն»)։

#### Հարց 40

**Մինչև ե՞րբ է հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ.**

քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով.

(«Սահմ. հոդված 66-րդ)։

#### Հարց 41

**Ի՞նչ իրավունք ունի յուրաքանչյուր դատապարտյալ .**

ներման, ներառյալ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի.

(«Սահմ. հոդված 70-րդ)։

#### Հարց 42

**Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն՝**

ունի հետադարձ ուժ.

(«Սահմ. հոդված 72-րդ, 3-րդ նախադասությւն»)։

#### Հարց 43

**Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը՝**

հետադարձ ուժ չունեն.

(«Սահմ. հոդված 73-րդ, մաս 1-ին)։

#### Հարց 44

**Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը՝**

հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով.

(«Սահմ. հոդված 73-րդ, մաս 2-րդ)։

#### Հարց 45

**Ի՞նչ է հաշվի առնվում Սահմանադրությունում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս.**

Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան.

(ՀՀ Սահմ. հոդված 81-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 46

**Ո՞ր դեպքերում յուրաքանչյուր ոք ունի սոցիալական ապահովության իրավունք.**

օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում.

(ՀՀ Սահմ. հոդված 83-րդ)

#### Չարդ 47

**Ի՞նչ իշխանություն է իրականացնում Ազգային ժողովը.**

օրենսդիր.

(ՀՀ Սահմ. հոդված 88-րդ, մաս 2-րդ)

#### Չարդ 48

**Ի՞նչ գործառույթներ է իրականացնում Ազգային ժողովը.**

վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ.

(ՀՀ Սահմ. հոդված 88-րդ, մաս 3-րդ)

#### Չարդ 49

**Քանի՞ պատգամավորից է կազմված Ազգային ժողովը.**

առնվազն հարյուր մեկ.

(ՀՀ Սահմ. հոդված 89-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 50

**Ինչպե՞ս է ընտրվում Ազգային ժողովը.**

համամասնական ընտրակարգով.

(ՀՀ Սահմ. հոդված 89-րդ, մաս 3-րդ)

#### Չարդ 51

**Ի՞նչ ժամկետով է ընտրվում Ազգային ժողովը.**

հինգ տարի.

(ՀՀ Սահմ. հոդված 90-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 52

**Ո՞վ է նշանակում Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները.**

Հանրապետության նախագահը.

(ՀՀ Սահմ. հոդված 93-րդ)

#### Չարդ 53

**Ի՞նչ ժամկետներում պատգամավորը չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորական գործունեության շրջանակներում հայտնած կարծիքի կամ քվեարկության համար.**

իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո.

(ՀՀ Սահմ. հոդված 96-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 54

**Ի՞նչ հիմքով կարող է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվել.**

միայն Ազգային ժողովի համաձայնությամբ.

(ՀՀ Սահմ. հոդված 96-րդ, մաս 2-րդ)

#### Չարդ 55

**Քանի մշտական հանձնաժողով կարող է ստեղծվել Ազգային ժողովում.**

ոչ ավելի, քան տասներկու.

(ՀՀ Սահմ. հոդված 106-րդ, մաս 1-ին)

#### Չարդ 56

**Ինչպե՞ս են խմբակցությունների միջև բաշխվում մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները.**

խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ.

(ՀՀ Սահմ. հոդված 106-րդ, մաս 2-րդ)

**Չարց 57**

**Օրենքով սահմանված կարգով ի՞նչ է ներառում պետական բյուջեն.**

պետության բոլոր եկամուտները և ծախսերը.

(«Սահմ. հոդված 110-րդ, մաս 1-ին)

**Չարց 58**

**Ինչպե՞ս է կատարվում ծախսերը՝ պետական բյուջեն չընդունվելու դեպքում.**

կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով.

(«Սահմ. հոդված 110-րդ, մաս 3-րդ)

**Չարց 59**

**Ո՞ր մարմինը կարող է վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը.**

Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ.

(«Սահմ. հոդված 119-րդ, մաս 3-րդ)

**Չարց 60**

**Որո՞նք են Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորները.**

մարզերը և համայնքները:

(«Սահմ. հոդված 121-րդ)

**Չարց 61**

**Ինչպե՞ս է սահմանվում վարչատարածքային բաժանումը**

Կառավարության ներկայացմամբ՝ սահմանվում է օրենքով.

(«Սահմ. հոդված 121-րդ)

**Չարց 62**

**Ո՞վ է պետության գլուխը.**

Հանրապետության նախագահը.

(«Սահմ. հոդված 123-րդ, մաս 1-ին)

**Չարդ 63**

**Ինչպե՛ս է կատարվում փոփոխությունները Կառավարության կազմում.**

Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ.

(ՀՀ Սահմ. հոդված 131-րդ)

**Չարդ 64**

**Ի՞նչ մարմին է Կառավարությունը.**

գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է.

(ՀՀ Սահմ. հոդված 146-րդ, մաս 1-ին)

**Չարդ 65**

**Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է՝**

պետության ներքին և արտաքին քաղաքականությունը.

(ՀՀ Սահմ. հոդված 146-րդ, մաս 2-րդ)

**Չարդ 66**

**Ո՞ր հարցերն են ենթակա Կառավարության իրավասությանը.**

գործադիր իշխանությանը վերաբերող բոլոր այն հարցերը, որոնք վերապահված չեն պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման այլ մարմինների.

(ՀՀ Սահմ. հոդված 146-րդ, մաս 4-րդ)

**Չարդ 67**

**Ո՞ր մարմինն է կառավարում պետական սեփականությունը.**

Կառավարությունը.

(ՀՀ Սահմ. հոդված 154-րդ, մաս 2-րդ)

**Չարդ 68**

**Ինչպե՛ս է Կառավարությունը մարզերում իրագործում իր տարածքային քաղաքականությունը.**

մարզպետների միջոցով.

(ՀՀ Սահմ. հոդված 160-րդ, մաս 1-ին)



## Չարց 69

**Հայաստանի Հանրապետությունում ո՞ր մարմինն է իրականացնում արդարադատություն.**

միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան.

(ՀՀ Սահմ. հոդված 162-րդ, մաս 1-ին)

## Չարց 70

**Ի՞նչ դատարաններ են գործում Հայաստանի Հանրապետությունում.**

Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը.

(ՀՀ Սահմ. հոդված 163-րդ, մաս 1-ին)

# ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՔԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

## Հարց 1

**Նշվածներից ո՞րը չի համարվում աշխատանքային օրենսդրության սկզբունք.**

Աշխատանքի ազատության իրավունքի սահմանափակման դեպքերի սահմանումը:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 3)

## Հարց 2

**Օրենսդրությամբ սահմանված կարգով, իր իրավասությունների սահմանում, գործատուն ինչպիսի՞ իրավական ակտեր կարող է ընդունել.**

Ներքին (լոկալ) և անհատական:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 4, 3-րդ մաս)

## Հարց 3

**Ի՞նչ տեսքով են ընդունվում գործատուի ներքին և անհատական իրավական ակտերը.**

Հրամանների կամ կարգադրությունների, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ իրավական ակտերի տեսքով:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք 5-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին պարբ.)

## Հարց 4

**Ի՞նչ նպատակով է գործատուն ընդունում անհատական իրավական ակտեր.**

Անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 5-րդ հոդված, 3-րդ մաս)

## Հարց 5

**Ե՞րբ են ուժի մեջ մտնում գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերը.**

Այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ:

(«Վախճանագրային օրենսգիրք, 5-րդ հոդված, 4-րդ մաս)

### Հարց 6

**Ինչպիսի՞ պայմաններ չեն կարող բովանդակել կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերը.**

Այնպիսիք, որոնք աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքային պայմանների համեմատ վատթարացնում են աշխատողի դրությունը:

(«Վախճանագրային օրենսգիրք, 6-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ պարբ.)

### Հարց 7

**Ինչ հիմքով է (են) ծագում աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները.**

Աշխատողի և գործատուի միջև սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

(«Վախճանագրային օրենսգիրք, հոդված 14, 1-ին մաս)

### Հարց 8

**Ի՞նչ է նշանակում աշխատանքային իրավունակություն.**

Աշխատանքային իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը:

(«Վախճանագրային օրենսգիրք, հոդված 15, 1-ին մաս)

### Հարց 9

**Ե՞րբ է լրիվ ծավալով ծագում աշխատանքային իրավունակությունը և աշխատանքային գործունակությունը.**

16 տարեկանից, բացառությամբ Աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

(« աշխատանքային օրենսգիրք, հոդված 15, 2-րդ մաս)

### Հարց 10

**Ե՛րբ է ծագում գործատու իրավաբանական անձանց աշխատանքային իրավունակությունը և գործունակությունը.**

Ստեղծման պահից:

(« աշխատանքային օրենսգիրք, հոդված 16, 1-ին մաս)

### Հարց 11

**Ի՛նչ հիմքով են տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատանքային պայմանագրով աշխատող անձինք համարվում աշխատող.**

Ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

(« աշխատանքային օրենսգիրք, 17-րդ հոդված, 2-րդ մաս)

### Հարց 12

**Ո՛վ է համարվում գործատու.**

Աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

(« աշխատանքային օրենսգիրք, 18-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 13

**Ո՛ր ժամանակահատվածն է հաշվարկվում որպես ընդհանուր աշխատանքային ստաժ.**

Որում հաշվարկվում է քաղաքացու՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել աշխատանքային ստաժում:

(« աշխատանքային օրենսգիրք, 20-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ)

#### Հարց 14

**Աշխատանքային հարաբերություններում ո՞վ է ներկայացնում աշխատողների իրավունքները և շահերը և պաշտպանում դրանք.**

Արհեստակցական միությունները:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 23, 1-ին մաս)

#### Հարց 15

**Ո՞ւմ կողմից է իրականացվում աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը.**

Աշխատողների ներկայացուցիչների և գործատուների (գործատուների ներկայացուցիչների):

(«Աշխատանքային օրենսգիրք, 33-րդ հոդված)

#### Հարց 16

**Կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում ի՞նչպես են կողմերը և նրանց ներկայացուցիչներն իրենց շահերը համաձայնեցնում և վեճերը լուծում.**

Կոլեկտիվ բանակցությունների միջոցով:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 45, 2-րդ մաս)

#### Հարց 17

**Ո՞րն է հանդիսանում գործադուլը ղեկավարող մարմինը.**

Արհեստակցական միությունը կամ նրա ստեղծած գործադուլային կոմիտեն:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 76)

#### Հարց 18

**Ի՞նչ է աշխատանքային պայմանագիրը.**

Համաձայնություն է աշխատողի և գործատուի միջև:

(«Աշխատանքային օրենսգիրք, 83-րդ հոդված)

## Չափ 19

### **Ի՞նչ է պարտավորվում գործատուն՝ ըստ աշխատանքային պայմանագրի.**

Աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 83-րդ հոդված)

## Չափ 20

### **Ի՞նչ ձևով է կնքվում աշխատանքային պայմանագիրը.**

Գրավոր ձևով՝ երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչև տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչև տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 85, 1-ին մաս)

## Չափ 21

### **Ի՞նչ նպատակով է գործատուն սահմանում փորձաշրջան.**

Նախատեսված աշխատանքին (պաշտոնին) աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 91-րդ հոդված, 1-ին մաս)

## Չափ 22

### **Որքա՞ն կարող է լինել փորձաշրջանի ժամկետը.**

Չի կարող երեք ամսից ավելի լինել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 92-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 23

**Ե՞րբ կարող է գործատուն աշխատողին ազատել աշխատանքից՝ մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը.**

Եթե գործատուն գտնում է, որ նախատեսված աշխատանքում (պաշտոնում) աշխատողի համապատասխանության ստուգման նպատակով սահմանված փորձաշրջանի ընթացիկ արդյունքներով աշխատողը չի համապատասխանում առաջադրված պահանջներին՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:

(«Ձ աշխատանքային օրենսգիրք, 93-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 24

**Նշվածներից ո՞ր աշխատողների դեպքում չի կարող կնքվել որոշակի ժամկետով պայմանագիր.**

Կամավոր աշխատանք կատարողների հետ:

(«Ձ աշխատանքային օրենսգիրք 95-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 25

**Ո՞ր աշխատանքն է համարվում համատեղությամբ կատարված աշխատանք.**

Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքը.

(«Ձ աշխատանքային օրենսգիրք, հոդված 99)

### Հարց 26

**Ե՞րբ է տրամադրվում համատեղությամբ աշխատողների ամենամյա վճարովի արձակուրդը՝ տարբեր գործատուների մոտ աշխատելու դեպքում.**

Հիմնական աշխատավայրում տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ:

(«Ձ աշխատանքային օրենսգիրք, 99-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 27

**Համատեղությամբ աշխատողի աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում համատեղությամբ աշխատողին արձակման նպաստ՝**

Չի վճարվում:

(«Հ աշխատանքային օրենսգիրք, 99-րդ հոդված, 4-րդ մաս)

### Հարց 28

**Ի՞նչ ժամանակահատվածի համար կարող է կնքվել ժամանակավոր աշխատանքային պայմանագիր.**

Մինչև երկու ամիս ժամկետով:

(«Հ աշխատանքային օրենսգիրք, հոդված 101, 1-ին մաս)

### Հարց 29

**Ո՞րն է համարվում ժամանակավոր աշխատանքային պայմանագիր.**

Մինչև երկու ամիս ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագիրը:

(«Հ աշխատանքային օրենսգիրք, 101-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 30

**Ինչպե՞ս է կատարում գործատուն իր պարտականությունները.**

Անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:

(«Հ աշխատանքային օրենսգիրք, հոդված 103, 1-ին մաս)

### Հարց 31

**Նշվածներից ո՞րը չի հանդիսանում աշխատանքային պայմանագրի լուծման հիմք՝**

Արհեստակցական միության նախաձեռնությունը:

(«Հ աշխատանքային օրենսգիրք, հոդված 109)

### Հարց 32

**Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու պատճառով, տվյալ պայմանագիրը լուծելիս գործատուն ի՞նչ ժամանակահատվածում պետք է գրավոր ծանուցի աշխատողին.**



Առնվազն 10 օր առաջ:

(« աշխատանքային օրենսգիրք, հոդված 111, 2-րդ մաս )

### Հարց 33

**Ինչպե՞ս կարող է գործատուն լուծել որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ ժամկետը լրանալու պատճառով.**

Այդ մասին գրավոր ծանուցելով աշխատողին առնվազն տասն օր առաջ:

(« աշխատանքային օրենսգիրք, 111-րդ հոդված, 2-րդ մաս)

### Հարց 34

**Ի՞նչ է հետևում այն դեպքին, երբ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են.**

Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

(« աշխատանքային օրենսգիրք, 111-րդ հոդված, 5-րդ մաս)

### Հարց 35

**Նշվածներից ո՞րը պետք է պարտադիր նշել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ.**

Աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին:

(« աշխատանքային օրենսգիրք, 115-րդ հոդված, 3-րդ մաս, 1-ին կետ)

### Հարց 36

**Ի՞նչ ժամանակահատվածում աշխատողը իրավունք ունի հետ վերցնել աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը.**

Ոչ ուշ, քան այն ներկայացնելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

(« աշխատանքային օրենսգիրք, հոդված 112, 3-րդ մաս)

### Հարց 37

**Առանց ծանուցման ո՞ր դեպքում է ենթակա լուծման աշխատանքային պայմանագիրը.**

Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 123, 1-ին մաս)

### Հարց 38

**Ժամկետային գինվորական ծառայության զորակոչվելու դեպքում ե՞րբ է գործատուն դադարեցնում աշխատանքային պայմանագիրը**

Ոչ ուշ, քան համապատասխան ծանուցագրում նշված ժամկետից երեք օր առաջ:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 124, 1-ին մաս)

### Հարց 39

**Ի՞նչ է պարտավոր անել գործատուն աշխատողի վերջնահաշվարկի օրը.**

Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(«Աշխատանքային օրենսգիրք, 130-րդ հոդված, 2-րդ մաս)

### Հարց 40

**Իրավունք ունի՞ գործատուն ձեռք բերել և մշակել աշխատողի քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների վերաբերյալ տվյալներ.**

Իրավունք չունի:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 132)

### Հարց 41

**Ի՞նչքան է կազմում շաբաթական սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողությունը.**

Չի կարող անցնել 40 ժամը:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 139, 1-ին մաս)

#### Հարց 42

**Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը.**

Չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

(«Վաշխատանքային օրենսգիրք, 139-րդ հոդված, 3-րդ մաս)

#### Հարց 43

**Ի՞նչքան է կազմում ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը նորմալ պայմաններում.**

Չի կարող անցնել 8 աշխատանքային ժամից, բացառությամբ Աշխատանքային օրենսգրքով, օրենքով, այլ իրավական ակտերով և կոլեկտիվ պայմանագրով նախատեսված դեպքերի:

(«Վաշխատանքային օրենսգիրք, հոդված 139, 2-րդ մաս)

#### Հարց 44

**Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար ի՞նչ աշխատաժամանակի տևողություն է սահմանված.**

Շաբաթական 24 ժամ:

(«Վաշխատանքային օրենսգիրք, հոդված 140, 1-ին մաս)

#### Հարց 45

**Աշխատաժամանակի կրճատ տևողություն ո՞ր կատեգորիայի աշխատողների համար է սահմանվում.**

Տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ:

(«Վաշխատանքային օրենսգիրք, հոդված 140, 1-ին մաս)

#### Հարց 46

**Ոչ լրիվ աշխատաժամանակը ո՞ւմ նկատմամբ է սահմանվում.**

Հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով:

(«Վաշխատանքային օրենսգիրք, հոդված 141, 1-ին մաս)

#### Հարց 47

**Տարվա ընթացքում գործատուի պահանջով արտաժամյա աշխատանքը չպետք է գերազանցի.**

Տարվա ընթացքում 180 ժամը:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 146, 1-ին մաս)

#### Հարց 48

**Ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրերի նախօրյակին ի՞նչքան է կազմում աշխատանքի տևողությունը.**

Կրճատվում է մեկ ժամով:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 147, 1-ին մաս)

#### Հարց 49

**Աշխատանքային օրվա ընթացքում ի՞նչքան ժամանակ է հատկացված հանգստի և սնվելու համար.**

2 ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 152, 1-ին մաս)

#### Հարց 50

**Մինչև 18 տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, ո՞րքան է տրամադրվում լրացուցիչ ընդմիջման համար.**

Նվազագույնը՝ 30 րոպե:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 153, 2-րդ մաս)

#### Հարց 51

**Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը.**

Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

(ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 159-րդ հոդված, 1-ին մաս)

## Հարց 52

**Աշխատողի ցանկությամբ ամենամյա արձակուրդի մասերով տրամադրման ժամանակ ո՞րքան պետք է կազմի նվազագույն տևողությունը.**

Առնվազն 10 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթի դեպքում:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 163)

## Հարց 53

**Աշխատանքային առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը ե՞րբ է տրամադրվում.**

Որպես կանոն, տրամադրվում է տվյալ կազմակերպությունում անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո, բացառությամբ համատեղությամբ աշխատողների:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 164, 2-րդ մաս)

## Հարց 54

**Ե՞րբ է ուսումնական հաստատությունների մանկավարժներին տրամադրվում ամենամյա արձակուրդ՝ աշխատանքային առաջին տարում.**

Սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ մանկավարժներն սկսել իրենց աշխատանքը:

(Աշխատանքային օրենսգիրք, 164-րդ հոդված, 6-րդ մաս)

## Հարց 55

**Նպատակային արձակուրդ է համարվում.**

Ուսումնական արձակուրդը:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 171)

## Հարց 56

**Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվելու համար ի՞նչ ժամանակով արձակուրդ է տրամադրվում.**

Երեք աշխատանքային օր:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 174)

### Հարց 57

**Ո՞ր դեպքում և ի՞նչ ժամկետով է աշխատողի պահանջով տրամադրվում չվճարվող արձակուրդ.**

Ընտանիքի մահացած անդամի թաղման դեպքում՝ ոչ պակաս երեք օրից:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 176, 1-ին մաս)

### Հարց 58

**Ինչպե՞ս է վճարվում աշխատողի աշխատավարձը.**

Աշխատավարձը հաշվարկվում է յուրաքանչյուր ամիս և աշխատանքային օրերին վճարվում աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

(Աշխատանքային օրենսգիրք, 192-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 59

**Ի՞նչ երաշխիքներ են սահմանված գործուղման մեկնած աշխատողների համար.**

Երաշխավորվում է նրանց աշխատատեղի (պաշտոնի) և աշխատավարձի պահպանումը գործուղման ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև նրանց վճարվում է օրապահիկ, և հատուցվում են գործուղման հետ կապված ծախսերը:

(Աշխատանքային օրենսգիրք, 209-րդ հոդված, 1-ին մաս)

### Հարց 60

**Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար գործատուն թվարկված ո՞ր խրախուսանքի տեսակը կարող է կիրառել.**

Լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 219)

### Հարց 61

**Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար գործատուն թվարկված ո՞ր կարգապահական տույժը կարող է կիրառել.**

Խիստ նկատողություն:

(«Աշխատանքային օրենսգիրք, հոդված 223, 1-ին մաս)

## Հարց 62

**Աշխատանքային յուրաքանչյուր խախտման համար քանի՞ կարգապահական տույժ է նշանակվում.**

Մեկ կարգապահական տույժ:

(«Վ աշխատանքային օրենսգիրք, հոդված 225)

## Հարց 63

**Նոր կարգապահական խախտում թույլ չտալու դեպքում կարգապահական տույժը մինչև մեկ տարին լրանալը կա՞րող է հանվել.**

Այո, կարող է:

(«Վ աշխատանքային օրենսգիրք, հոդված 230)

## Հարց 64

**Ո՞ւմ պարտավորությունն է աշխատանքի նորմալ պայմանների ապահովումը.**

Գործատուի:

(«Վ աշխատանքային օրենսգիրք, հոդված 244)

## Հարց 65

**Ինչպե՞ս է սահմանվում Գործատուի հասկացությունը «Վ աշխատանքային օրենսգրքում».**

Գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա և (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը:

(«Վ աշխատանքային օրենսգիրք, հոդված 18)

## Հարց 66

**Ինչպե՞ս է սահմանվում Սոցիալական գործընկերություն համակարգը «Վ աշխատանքային օրենսգրքում».**

Սոցիալական գործընկերությունը աշխատողների (նրանց ներկայացուցիչների), գործատուների (նրանց ներկայացուցիչների), իսկ սույն օրենսգրքով սահմանված

դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության միջև փոխհարաբերությունների համակարգ է, որը կոչված է ապահովելու աշխատողների և գործատուների շահերի համաձայնեցումը կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում:

(«ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 39)

#### Հարց 67

**Ե՞րբ է աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուժը կորցրած ճանաչվում, եթե մինչ այդ գործատուն չի լուծել պայմանագիրը.**

Եթե ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի ժամանակ:

(«ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 115, մաս 5-րդ.)

#### Հարց 68

**Ո՞ր դեպքում չի կարող կիրառվել կարգապահական տույժ.**

Եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս:

(«ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 227, մաս 2-րդ.)

#### Հարց 69

**Բերվածներից ո՞ր դեպքում գործատուն կարող է չկատարել վերջնահաշվարկ.**

Եթե աշխատողը նույն գործատուի կամ օրենքով սահմանված կարգով իրավահաջորդ ճանաչված գործատուի մոտ փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանքի:

(«ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 130, մաս 1.1)

#### Հարց 70

**Բերվածներից ի՞նչ է պարտավոր ունենալ յուրաքանչյուր կազմակերպություն.**

Աշխատողների տեղահանման պլան:

(«ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 250, մաս 5-րդ.)



# ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

## Չարդ 1

**«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, հաշվապահական հաշվառումն իրենից ներկայացնում է՝**

Կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս)

## Չարդ 2

**Ովքե՞ր են պարտավոր վարել հաշվապահական հաշվառում.**

Բոլոր կազմակերպությունները:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս)

## Չարդ 3

**Ո՞վ (քե՞ր) է (են) ստորագրում Ֆինանսական հաշվետվությունները.**

Կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 2-րդ մաս)

## Չարդ 4

**Ո՞վ է պատասխանատվություն կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար.**

Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 11-րդ հոդված, 1-ին մաս)

## Չարդ 5

**Ի՞նչ արժույթով է վարվում Հաշվապահական հաշվառումը.**

Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 1-ին մաս, ա) կետ)

#### Ֆարց 6

**Սկզբնական հաշվառման փաստաթղթում ո՞ր վավերապայմանը (ռեկվիզիտը) պարտադիր չէ.**

Կազմողի անուն, ազգանունը և ստորագրությունը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Ֆարց 7

**Սկզբնական հաշվառման փաստաթղթում ո՞ր վավերապայմանը (ռեկվիզիտը) պարտադիր չէ.**

Կազմողի անուն, ազգանուն և հայրանունը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Ֆարց 8

**Սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է՝**

Հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 1-ին մաս)

#### Ֆարց 9

**Ովքե՞ր են կրում պատասխանատվություն գրանցամատյանները ժամանակին և ամբողջական կազմելու համար.**

Դրանք վարող անձինք:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 3-րդ մաս)

#### Ֆարց 10

**Ինչպիսի՞ ուղղումներ չի թույլատրվում կատարել գրանցամատյաններում.**

Չձանուցված:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 4-րդ մաս)

## Յարց 11

### **Ինչպե՞ս է հաստատվում ուղղումը գրանցամատյաններում.**

Գրանցամատյանն ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ՝ նշելով ուղղման տարին, ամիսը և ամսաթիվը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 4-րդ մաս)

## Յարց 12

### **Ո՞վ է որոշում հաշվապահական հաշվառման փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը.**

Կազմակերպության ղեկավարը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված)

## Յարց 13

### **Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն.**

Անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 1-ին մաս)

## Յարց 14

### **Ո՞ր մարմինն է սահմանում պարտադիր գույքագրումների դեպքում գույքագրման օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները.**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 17-րդ հոդված, 2-րդ մաս)

## Յարց 15

### **Ո՞վ է կրում հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը.**

Կազմակերպության ղեկավարը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 19-րդ հոդված, 3-րդ մաս)

## Յարց 16

### **Հաշվետու տարին ո՞ր ժամանակաշրջանն է ներառում.**

Տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 22-րդ հոդված, 2-րդ մաս)

## Յարց 17

### **Նոր ստեղծված կազմակերպության համար առաջին հաշվետու տարին ո՞ր ժամանակաշրջանն է ներառում.**

Դրանց պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 22-րդ հոդված, 2-րդ մաս)

## Յարց 18

### **Ե՞րբ են կազմակերպությունները ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ.**

Մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 2-րդ մաս)

## Յարց 19

### **Ե՞րբ են կազմակերպությունները ներկայացնում միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ.**

Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

(«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 2-րդ մաս)

## Յարց 20

### **Ո՞ր օրն է համարվում ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օր.**

Դրանց՝ ըստ պատկանելության հանձնելու կամ փոստով ուղարկելու օրը:

(«Հաշվապահական հաշվառման մասին » ՀՀ օրենք, 23-րդ հոդված, 3-րդ մաս)

### Հարց 21

**Ի՞նչ հարաբերություններ է կարգավորում «Գնումների մասին» ՀՀ օրենքը.**

- Պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված)

### Հարց 22

**Նշվածներից ո՞րը «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «պատվիրատու» հասկացությունից չէ.**

- Պետական մարմինների մասնակցությամբ ստեղծված կազմակերպությունները:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 1-ին կետ)

### Հարց 23

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «պայմանագիր» հասկացությունը.**

- Գնում կատարելու նպատակով կնքվող գրավոր գործարք:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 4-րդ կետ)

### Հարց 24

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «մասնակից» հասկացությունը.**

- Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 5-րդ կետ)

### Հարց 25

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «հրավեր» հասկացությունը.**

- Պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 7-րդ կետ)

### Հարց 26

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «հայտ» հասկացությունը.**

- Հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 9-րդ կետ)

#### **Հարց 27**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «հայտի ապահովում» հասկացությունը.**

- «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 9-րդ կետ)

#### **Հարց 28**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «պայմանագրի ապահովում» հասկացությունը.**

- «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 10-րդ կետ)

#### **Հարց 29**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «էլեկտրոնային միջոցներ» հասկացությունը.**

- մալուխային, ռադիո, օպտիկական միջոցներով կամ էլեկտրամագնիսական այլ միջոցներով փոխանցված, տեղափոխված և ստացված տվյալների մշակման ու պահպանման, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգերի կազմակերպման համար անհրաժեշտ էլեկտրոնային, այդ թվում՝ ծրագրային և ապարատային միջոցներ.  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 12-րդ կետ)

#### **Հարց 30**

**Ո՞ր մարմինն է, ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, համարվում «լիազորված մարմին».**

- Պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 13-րդ կետ)

**Չարդ 31**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «տեղեկագիր» հասկացությունը.**

- «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայք.

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 14-րդ կետ)

**Չարդ 32**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «գնման առարկա» հասկացությունը.**

- Գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 16-րդ կետ)

**Չարդ 33**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «գնման առարկայի բնութագիր» հասկացությունը.**

- Գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 17-րդ կետ)

**Չարդ 34**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «խորհրդատու» հասկացությունը.**

- Պատվիրատուի հետ խորհրդատվական ծառայությունների պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 19-րդ կետ)

**Չարդ 35**

**Որքա՞ն է կազմում գնումների բազային միավորը.**

- Մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 23-րդ կետ)

**Չարդ 36**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «գնման գործընթաց» հասկացությունը.**

- Գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 23-րդ կետ)

**Չարդ 37**

**Ի՞նչ իմաստ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «գնման գին» հասկացությունը.**

- գնման գին՝ ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված, 24-րդ կետ)

**Չարդ 38**

**Նշվածներից ո՞ր գործարքի տեսակի վրա չի տարածվում «Գնումների մասին» օրենքի գործողությունը.**

- Աշխատանքային պայմանագրեր:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդված, 4-րդ մաս, 1-ին կետ)

**Չարդ 39**

**Ո՞ր մարմինն է հաստատում գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման և ֆինանսավորման կարգը.**

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս, 4-րդ կետ)



#### Չարդ 40

**«Գնումների մասին» օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝**

- Հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս, 8-րդ կետ)

#### Չարդ 41

**Ո՞ր մարմինն է հաստատում գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը.**

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված, 1-ին մաս, 11-րդ կետ)

#### Չարդ 42

**Նշված ո՞ր անձինք իրավունք չունեն մասնակցելու գնումների ընթացակարգերին.**

- Որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդված, 1-ին մաս, 2-րդ կետ)

#### Չարդ 43

**Ինչպե՞ս են պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձինք մասնակցում գնումներին.**

- այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ կազմակերպություններում պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ նպաստավոր պայմանների սահմանմանը և կիրառմանը:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 7-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Չարդ 44

**Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա**

- պայմանագիրը կնքվելուն կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 45

**Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների հաշվառման նպատակով պետական բյուջեի և պետական բյուջեից դրամաշնորհի, այդ թվում՝ սուբվենցիայի ձևով հատկացվող միջոցների հաշվին գնման պայմանագիր կնքելուց կամ գնման գործընթացը չկայացած հայտարարվելուց հետո՝**

- Յոթ աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հաշվետվություն՝ գնման գործընթացի մասին:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Հարց 46

**Մինչև պայմանագիր կնքելը ի՞նչ է պարտավոր պատվիրատուն հրապարակել տեղեկագրում.**

- Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 47

**Ի՞նչ տեղեկություններ է պարունակում պայմանագիր կնքելու մասին որոշումը.**

- Ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Հարց 48

**Ի՞նչ ժամկետ է համարվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը.**

- Անգործության ժամկետը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Հարց 49

**Որքա՞ն է անգործության ժամկետը՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում.**

- առնվազն 10 օրացուցային օր:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդված, 2-րդ մաս)

#### Հարց 50

**Եթե հայտնաբերվում է մասնակցի կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցչի հակաօրինական արարքը գնման գործընթացի շրջանակներում, ապա**

- Դրա ի հայտ գալու օրը, պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավապահ մարմիններին:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 12-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 51

**Ի՞նչ է ներառում պայմանագրում ընդգրկվող գնման առարկայի բնութագրերը.**

- Պայմանագրի գինը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 52

**Կարո՞ղ են արդյոք գնման առարկայի հատկանիշները որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին պահանջ կամ հղում պարունակել.**

- Ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 13-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Հարց 53

**Ի՞նչ լեզվով են կազմվում և տեղեկագրում հրապարակվում գնմանը վերաբերող փաստաթղթերը, հայտարարությունները.**

- Հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախատրակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 14-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 54

**Ինչպե՞ս է հաստատվում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը.**

- Բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 1-ին մաս)

#### Հարց 55

**Ի՞նչ ժամկետներում է պատվիրատում տեղեկագրում հրապարակում գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները.**

• Հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 3-րդ մաս)

#### Հարց 56

**Եթե գնման գինը գերազանցում է տվյալ ժամանակահատվածում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ապա.**

• Պայմանագիր կնքվելու դեպքում տվյալ ժամանակահատվածին հաջորդող ժամանակահատվածում նախատեսվում են ֆինանսական միջոցներ գնման պայմանագրով սահմանված գնումն իրականացնելու կամ տվյալ գնումը ժամանակավորապես դադարեցնելու համար (եթե ժամանակավոր դադարեցումը պահանջում է ֆինանսական միջոցներ):

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 5-րդ մաս)

#### Հարց 57

**Կարո՞ղ է արդյոք մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը կնքվել պայմանագիր.**

• Կարող է, պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 6-րդ մաս)

#### Հարց 58

**Ի՞նչ հիմքով է նախատեսվում գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցները.**

• Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 8-րդ մաս, 1-ին նախադ.)

### Հարց 59

**Կարո՞ղ է արդյոք ֆինանսական միջոցներ նախատեսվել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ.**

- Արգելվում է:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված, 8-րդ մաս, 2-րդ նախ.)

### Հարց 60

**Նշվածներից ո՞րը գնում կատարելու ընթացակարգերից չէ.**

- Բանակցությունը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 1-ին մաս, 1-ին կետ)

### Հարց 61

**Որո՞նք են մրցույթի տեսակները**

- Բաց և փակ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված, 2-րդ մաս)

### Հարց 62

**Ինչպիսի՞ն է լինում փակ մրցույթը.**

- Նպատակային կամ պարբերական:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված 2-րդ մաս)

### Հարց 63

**Ո՞ր դեպքում է կիրառվում փակ մրցույթը,**

- Եթե գնման գործընթացը պարունակում է պետական գաղտնիք:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված 1-ին մաս)

### Հարց 64

**Նշվածներից ո՞ր դեպքում գնումը կարող է կատարվել մեկ անձից,**

• եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված 1-ին մաս, 1-ին կետ)

### **Չարդ 65**

**Կարո՞ղ են արդյոք մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները բաժանվել չափաբաժինների.**

- Կարող են մեկ գնման գործընթացի շրջանակներում:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված 1-ին մաս)

### **Չարդ 66**

**Կարո՞ղ է մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.**

- Արգելվում է:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված 1-ին մաս, 1-ին կետ)

### **Չարդ 67**

**Կարո՞ղ է փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը.**

- Արգելվում է:  
(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 25-րդ հոդված 1-ին մաս, 2-ին կետ)

### **Չարդ 68**

**Նշվածներից ո՞ր տեղեկությունն է, որ պետք է պարունակի հրավերը.**

• Նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 28-րդ հոդված 1-ին մաս, 10-րդ կետ)

### **Չարդ 69**

**Ի՞նչ ժամկետում մասնակիցն իրավունք ունի պահանջելու հրավերի պարզաբանում.**

• Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ՝ գրավոր:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 29-րդ հոդված 1-ին մաս)

### Ֆարց 70

**Կարո՞ղ է մասնակիցը նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ.**

- Չի կարող:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 30-րդ հոդված 1-ին մաս)

### Ֆարց 71

**Ի՞նչ ժամկետում մասնակիցը կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը.**

- Մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 31-րդ հոդված 2-րդ մաս)

### Ֆարց 72

**Նշվածներից ո՞ր դեպքում է մասնակիցը վճարում հայտի ապահովումը,**

- Եթե նա խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 32-րդ հոդված 2-րդ մաս 2-րդ կետ)

### Ֆարց 73

**Ի՞նչ ժամկետում կարող են մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները պահանջել գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները.**

- Մեկ օրացուցային օրվա ընթացքում:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդված 5-րդ մաս)

### Ֆարց 74

**Ո՞ր հայտերն են գնահատվում բավարար.**

- Հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդված 5-րդ մաս)

### Ֆարց 75

**Նշվածներից ո՞րն է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որոշելու մեթոդներից (սկզբունքներից).**

- Այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 34-րդ հոդված 2-րդ մաս, 2-րդ կետ)

**Հարց 76**

**Որքա՞ն է կազմում պայմանագրի ապահովման չափը.**

- Պայմանագրի գնի 10 տոկոսը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդված 2-րդ մաս)

**Հարց 77**

**Ի՞նչ տվյալներ պետք է ներառի պայմանագրի գնի հաշվարկը.**

- Տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 39-րդ հոդված 1-ին մաս)

**Հարց 78**

**Ո՞վ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները.**

- Յուրաքանչյուր անձ.

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 46-րդ հոդված 1-ին մաս)

**Հարց 79**

**Ի՞նչ հիմքով են կարգավորվում գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները.**

- Դրանք վարչական հարաբերություններ չեն, և կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

(«Գնումների մասին» ՀՀ օրենք, 46-րդ հոդված 2-րդ մաս)